ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՁՈՒՄՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2021

www.mfa.am

Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն | Министерство иностранных дел Республики Армения

Ministère des Affaires étrangères de la République d'Arménie | Ministry of Foreign Affairs of the Republic of Armenia

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
2020Թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

1. Նախաբան 3

2. Ղարաբաղյան հիմնահարց 5

3. Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչում և դատապարտում, մարդկության դեմ հանցանքների կանխարգելման օրակարգ 8

4. Ռուսաստանի Դաշնություն 9

5. Ամերիկայի Միացյալ Նահանգներ 10

6. Եվրոպական Միություն 12

7. Հարևան երկրներ 14

7.1 Վրաստան 14

7.2 Իրանի Իսլամական Հանրապետություն 15

7.3 Թուրքիայի Հանրապետություն 15

8. Եվրասիական տարածաշրջանի երկրներ 15

9. Եվրոպական երկրներ 17

10. Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի երկրներ 25

11. Միջին Արևելքի և Աֆրիկայի երկրներ 27

12. Հյուսիսային և Հարավային Ամերիկայի երկրներ 29

13. Միջազգային բազմակողմ համագործակցություն 30

13.1 Միավորված ազգերի կազմակերպություն 30

13.2. Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն 32

13.3 Եվրոպայի խորհուրդ 33

13.4 Անկախ պետությունների համագործակցություն (ԱՊՀ) 35

13.5 Եվրասիական տնտեսական միություն 35

13.6 Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն 36

13.7 Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպություն 38

13.8 Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպություն 38

14. Միջազգային տնտեսական համագործակցություն 39

15. Մարդու իրավունքների պաշտպանության հարցեր 40

16. Գլոբալ անվտանգության և ոչ կոնվենցիոնալ խնդիրներ 42
17. Խաղաղապահ գործունեություն 43
18. Իրավապայմանագրային դաշտ 43
19. Հյուպատոսական ծառայություն 44
20. Հանդիպումներ և փոխադարձ այցելություններ 44
21. Դիվանագիտական հարաբերություններ 45
22. Դիվանագիտական դպրոց 45
23. Միջազգային հանրային կարծիք 46

1. Նախաբան

2020 թվականն աննախադեպ ծանր, կորստաբեր տարի էր Հայաստանի, Արցախի, և ամբողջ հայ ժողովրդի համար:

«COVID-19» համավարակի պատճառով՝ գլոբալ հումանիտար ճգնաժամի և տնտեսական անկման պայմաններում Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը տարեսկզբից ձեռնամուխ էր եղել ՀՀ արտաքին քաղաքականության ուղենիշների և կառավարության ծրագրի իրականացման ուղղությամբ աշխատանքների շարունակականության ապահովմանը, ՀՀ կառավարության և վարչապետի հանձնարարականների կատարմանը, բարեփոխումների և զարգացման օրակարգի հետագա խթանմանը, միջազգային գործընկերների և կառույցների հետ փոխգործակցության մակարդակի խորացմանն ու ամրապնդմանը՝ նպատակ ունենալով միջազգային համագործակցությունը հագեցնել նոր ձևաչափերով և բովանդակությամբ:

Հայաստանի Հանրապետության դիվանագիտության առջև դրված խնդիրների շարքում շարունակում էին գերակա մնալ ղարաբաղյան հակամարտության խաղաղ՝ բացառապես քաղաքական միջոցներով կարգավորումը, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցը՝ որպես ցեղասպանությունների դատապարտման և նորերի կանխարգելման կարևոր գործոն և ՀՀ արտաքին քաղաքականության օրակարգի կարևոր բաղադրիչ:

Ղարաբաղյան հիմնախնդրի համատեքստում՝ վերջին շրջանի ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության ձևաչափում բանակցությունների ֆոնին, Ադրբեջանը բազմիցս և բացահայտորեն հայտարարում էր ԼՂ հակամարտությունը ռազմական ճանապարհով լուծելու մտադրության մասին՝ այդ ընթացքում խորացնելով ռազմական համագործակցությունը Թուրքիայի հետ: ՀՀ դիվանագիտությունն, այդուամենայնիվ, գործադրում էր բոլոր ջանքերը ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության ձևաչափը կենսունակ պահելու, ԼՂ հիմնախնդիրն այդ շրջանակում ամրագրված հիմնարար սկզբունքների, մասնավորապես՝ ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման իրավունքի հենքի վրա կարգավորելու ուղղությամբ:

Սեպտեմբերի 27-ին Արցախի դեմ սանձազերծված 44-օրյա լայնածավալ ռազմական ագրեսիայի նախերգանքը դարձան **հուլիսի 12-ից** Հայաստանի Հանրապետության հյուսիսարևմտյան սահմանագծի հատվածում ՀՀ և ԱՀ ԶՈՒ և սահմանապահ զորքերի միջև ադրբեջանական կողմից հրահրված ռազմական բախումները, որոնց ընթացքում տեղի ունեցած մարտերում հակառակորդը կիրառեց հետախուզական, հարվածային և մարտական գործողությունների կառավարման գործառույթներով օժտված ԱԹՍ-ներ, հրետանի և ծանր զինտեխնիկա, իսկ արդյունքում ունեցավ դիրքային, զինուժի և զինտեխնիկայի զգալի կորուստներ:

Սրան հետևեց **սեպտեմբերի 27-ին** Արցախի դեմ սանձազերծված 44-օրյա լայնածավալ ռազմական ագրեսիան՝ Մերձավոր Արևելքից և այլ վայրերից Թուրքիայի աջակցությամբ հակամարտության գոտի տեղափոխված 2000-ից 4000 վարձկան ահաբեկիչների ներգրավմամբ: Թվաքանակով և զինտեխնիկայով բազմապատիկ գերազանցող հակառակորդի հետ պատերազմում հայկական կողմը ծանր կորուստներ կրեց և համաձայնեց ՌԴ նախագահի միջնորդությամբ հրադադարի հաստատմանը, որն ամրագրվեց 2020թ. **նոյեմբերի 9-ի** եռակողմ հայտարարությամբ: Վերջինը նաև սահմանեց ՌԴ խաղաղապահ զորակազմի տեղակայումը հակամարտության գոտում:

Նշված զարգացումների արդյունքում ներկայումս հարավկովկասյան տարածաշրջանում ստեղծվել է բոլորովին նոր իրավիճակ, խարխլվել է անվտանգային նախկին միջավայրը, առաջ է եկել տարածաշրջանային երկկողմ և բազմակողմ հարաբերությունները վերաիմաստավորելու, վերակառուցելու, անվտանգային նոր ճարտարապետություն կերտելու անհրաժեշտություն՝ նոր մարտահրավերներին ու սպառնալիքներին արդյունավետորեն դիմագրավելու նպատակով:

Տվյալ ժամանակաշրջանում ՀՀ դիվանագիտական ծառայությունը գործել է արտակարգ ռեժիմով:

2020թ. շարունակվել է ՀՀ արտաքին քաղաքականության լիարժեք սպասարկմանն ուղղված՝ ՀՀ դիվանագիտական ծառայության գործառույթների իրականացումը, մասնակցությունը երկկողմ և բազմակողմ մեծաթիվ տարբեր մակարդակի և ձևաչափի հանդիպումներին (համավարակով պայմանավորված՝ նաև տեսակապի միջոցով), նախաձեռնվել, իրականացվել կամ աջակցություն է ստացվել միջազգային հարթակներում և երկկողմ հարաբերություններում Հայաստանի և Արցախի շահերի պաշտպանությանն ուղղված մի շարք միջոցառումներ:

Սեպտեմբերի 27-ին սանձազերծված ռազմական գործողությունների կապակցությամբ, Հայաստանի դիվանագիտական ծառայության ակտիվությամբ պայմանավորված, պետությունների և միջազգային կազմակերպությունների ղեկավարների կողմից արվել է ադրբեջանական ագրեսիան դատապարտող **228** հայտարարություն, խորհրդարանների մակարդակով ընդունվել է ագրեսիան դատապարտող և Արցախի անկախության ճանաչման կոչ անող **33**, այդ թվում՝ Արցախի անկախության ճանաչման **2** բանաձև, Արցախի անկախությունը ճանաչել են տեղական ինքնակառավարման **34** մարմին:

Տեղի են ունեցել ՀՀ նախագահի աշխատանքային **9**, ՀՀ վարչապետի պաշտոնական **1** և աշխատանքային **4**, ՀՀ ԱԳ նախարարի պաշտոնական **2** և աշխատանքային **10** օտարերկրյա այցեր, բարձրաստիճան պատվիրակությունների աշխատանքային **3** և պաշտոնական **8**

փոխայցելություններ: Համավարակի պատճառով տարբեր այցեր և միջոցառումներ անցկացվել են տեսակապի ձևաչափով:

2.Ղարաբաղյան հիմնահարց

Սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմի ընթացքում և **նոյեմբերի 9-ի** հրադադարից հետո ակտիվ աշխատանքներ են տարվել ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության ձևաչափում: Պատերազմի ընթացքում ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը ամենօրյա ռեժիմով տասնյակ հեռախոսազրույցներ է ունեցել համանախագահ երկրների ղեկավարների և ներկայացուցիչների, առավել մեծ ինտենսիվությամբ՝ ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի հետ, որի միջնորդությամբ էլ ընդունվել է հրադադարի հաստատման՝ Հայաստանի, Ադրբեջանի և Ռուսաստանի ղեկավարների եռակողմ հայտարարությունը:

Մեծ ակտիվությամբ են ընթացել նաև հայկական դիվանագիտության ջանքերը միջազգային կազմակերպություններում, մասնավորապես՝ միջազգային հարթակներում Հայաստանի դիրքորոշումները ներկայացնելու և պաշտպանելու, ադրբեջանական ագրեսիան դատապարտելու ուղղությամբ:

Ուշադրության կենտրոնում է եղել Ադրբեջանի վերահսկողության տակ անցած տարածքներում հայ–կա–կան **պատմամշակութային ժառանգության պատշաճ և երաշխավորված պահպանումը**, վանդա–լիզմի դեպքերի կանխումը և մշտադիտարկման հնարավորությունների ընդ–լայ–նումը: Համակարգվել է միջազգային կազմակերպությունների՝ մասնավորապես ՄԱԿ-ի և վերջինիս մասնագիտացված գործակալությունների, ինչպես նաև միջազգային մարդասիրական կազմակերպությունների կողմից Արցախում վերջին պատերազմից հետո տուժած բնակչությանը հումանիտար օժանդակություն տրամադրելու աշխատանքները Հայաստանում և Արցախում:

Պատերազմի առաջին օրերից, ապա նաև նոյեմբերի 9-ին հաստատված զինադադարից հետո, Հայաստանը բարձրացրել է Արցախում միջազգային կազմակերպությունների ներգրավման և հումանիտար աջակցության տրամադրման հարցը: ՀՀ առաջնային նպատակն է Արցախում միջազգային կազմակերպությունների ծրագրերի իրականացումը՝ **տեղահանված անձանց անվտանգ և արժանապատիվ վերադարձն** ապահովելու նպատակով: Պատերազմից տուժած անձանց օժանդակություն տրամադրելու հարցում ՄԱԿ-ի մասնագիտացված կառույցների ներգրավման հարցը շարունակաբար քննարկվել է տարբեր մակարդակներում:

ԼՂ հակամարտության խնդիրը **ՄԱԿ ԱԽ-ում** քննարկվել է երկու անգամ՝ փակ ձևաչափով, **սեպտեմբերի 29-ին** և **հոկտեմբերի 19-ին:** ՄԱԿ գլխավոր քարտուղարը

հանդես է եկել մի շարք հայտարարություններով, որոնցով կոչ է արել անմիջապես դադարեցնել ռազմական գործողությունները և սկսել երկխոսություն: Տեղի են ունեցել մի շարք հեռախոսազրույցներ ՀՀ վարչապետի, ԱԳ նախարարի և ՄԱԿ ԳՔ միջև:

Ադրբեջանական ագրեսիայի առաջին իսկ օրերից ԱԳՆ ձեռնարկել է անհրաժեշտ քայլեր սևեռելու միջազգային հանրության ուշա–դրությունը կատարվող ռազմական հանցագործությունների վրա, դատապարտելու և կանխելու հուշարձանները դիտավորյալ վնասելու դեպքերը:

Սեպտեմբերի 27-ից ի վեր ԱԳՆ մշտական կապի մեջ է եղել **ՅՈՒՆԵՍԿՕ**-ի և մշակութային արժեքների պաշտպանության հարցերով զբաղվող միջազգային այլ կառույցների և կազմակերպությունների հետ, ներ–կայացրել Արցախում տիրող իրավիճակը, վերջիններիս ուշադրությունը հրավիրել Արցախի հայկական պատմամշակութային հուշարձանների և հնագիտական վայրերի վտանգված լինելու խնդրի վրա:

Արդյունքում **նոյեմբերի 20-ին** ՅՈՒՆԵՍԿՕ-ն հանդես է եկել հայտարարությամբ՝ պատրաստակամություն հայտնելով, կողմերի համաձայնության դեպքում, ցուցաբերել տեխնիկական աջակցություն և **առաքելություն գործուղել Լեռնային Ղարաբաղ՝ տեղում պատմամշակութային հուշարձանների վիճակը գնահատելու** նպատակով: Առաքելության գործուղ–մանն իրենց աջակցությունն են հայտնել ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրներ Ռուսաստանն ու Ֆրանսիան՝ երկրների ղեկավարների մակարդակով ընդգծելով ԼՂ-ում հայ մշակութային ժառանգության պաշտպանության անհրաժեշտությունը:

Այդուհանդերձ, ադրբեջանական կողմը տարբեր պատճառաբանություններով արհեստական խոչընդոտներ է հարուցում ՅՈՒՆԵՍԿՕ-ի առաքելության գործուղման հարցում: **Դեկտեմբերի 21-ին** ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրենի մշա–կութային հարցերով տեղակալ Էռնեստո Օտտոնեն **հայտարարություն է տարա–ծել՝** կոչ անելով Ադրբեջանին համաձայնել առաքելության իրականացմանը: Հայտարարությունն իր տեսակով եզակի է, քանի որ առաջին անգամ միջազգային կազմակերպություն հանդես է գալիս Ադրբեջանին ուղղված հասցե–ական հայտարարությամբ:

Զինված հակամարտությունների ժամանակ մշակութային արժեքների պաշտպանության 1954թ. Հաագայի կոնվենցիայի կոմիտեի նիստին ընդառաջ նախապատրաստվել և ՅՈՒՆԵՍԿՕ է ներկայացվել որոշման նախագիծ «Փաստահավաք ընթացակարգերի կատարելագործում և զինված հակամարտության ընթացքում դիտավորյալ ոչնչացումից մշակութային և կրոնական ժառանգության պաշտպանության մեխանիզմների ամրապնդում» խորագրով՝ նիստի օրակարգում ընդգրկելու համար: Բանակցությունների արդյունքում կոմիտեի կողմից ընդունվել է հակամարտության գոտում **մշտադիտարկման և վերահսկման լրացուցիչ մեխանիզմների ներդրման վերաբերյալ որոշում**, որի նախագիծը ներկայացվել է

կոմիտեի քարտուղարության կողմից: Բովանդակային առումով սույն որոշումը կրկնում էր հայկական կողմի նախաձեռնությունը:

Միաժամանակ, 1954թ. Հաագայի կոնվենցիայի կոմիտեի վերոնշյալ նիստում **ընդունվել է հայտարարություն** ԼՂ-ում և հարակից տարածքներում մշակութային արժեքների պաշտպանության ապահովման և անկախ տեխնիկական առաքելության իրականացման վերաբերյալ: **Դեկտեմբերի 8-ին** Ֆրանսիա կատարած աշխատանքային այցի շրջանակներում **ՀՀ ԱԳ նախարարը հանդիպել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Գլխավոր տնօրենի** հետ: Հանդիպման ընթացքում զրուցակիցները բարձր են գնահատել Հայաստանի և ՅՈՒՆԵՍԿՕ-ի միջև հաստատված սերտ համագործակցությունը, ինչպես նաև անդրադարձ կատարել Արցախի դեմ ադրբեջանական ագրեսիայի հետևանքով տարածաշրջանում ստեղծված իրադրությանը:

ՀՀ ԱԳ նախարարի տեղակալի գլխավորությամբ կազմավորվել է միջգերատեսչական աշխատանքային խումբ՝ Արցախի մշակութային ժառանգության պաշտպանությանն ուղղված քայ–լերը համակարգելու և քննարկելու նպատակով:

Արցախի դեմ Ադրբեջանի ագրեսիան փոփոխել է մարդու իրավունքների ոլորտում իրականացվող քայլերի տրամաբանությունը՝ մարդու իրավունքների պաշտպանության խնդիրներով զբաղվող **միջազգային կառույցների հետ համագործակցության առանցքում դնելով Ադրբեջանի սանձազերծած ռազմական ագրեսիայի ընթացքում տեղի ունեցած մարդու իրավունքների կոպիտ խախտումների, կատարված պատերազմական և ցեղասպան հանցագործությունների դատապարտման, դրանց պատշաճ քաղաքական և իրավական գնահատական տալու հարցը:** Այս աշխատանքները շարունակվում են նաև հետպատերազմյան շրջանում:

ԱԳՆ-ն իրականացրել է այդ խախտումների վերաբերյալ միջազգային տարբեր կառույցներին և պաշտոնյաներին տեղեկացնելու աշխատանքները:

ԱԳՆ օպերատիվ կապ է պահպանել ՀՀ-ում ԿԽՄԿ պատվիրակության հետ՝ ներկայացնելով Ադրբեջանի կողմից միջազգային մարդասիրական իրավունքի կոպտագույն խախտումները, քաղաքացիական բնակչության և ենթակառուցվածքների նպատակային թիրախավորումը, գերեվարված անձանց նկատմամբ նվաստացուցիչ վերաբերմունքը, զոհվածների մարմինների խեղման, գլխատման դեպքերը և այլն: **Նոյեմբերի 9-ի** հայտարարության ընդունումից հետո բազմաթիվ հանդիպումներ են տեղի ունեցել ԿԽՄԿ պատվիրակության ներկայացուցիչների հետ գերիների և զոհվածների դիերի փոխանակման, ինչպես նաև անհայտ կորած անձանց հայտնաբերման հարցերով:

Դեկտեմբերի 2-ին ՀՀ ԱԳ նախարարն ընդունել է Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում ԿԽՄԿ տարածաշրջանային տնօրենին: ԿԽՄԿ և ՀԿԽԸ ներկայացուցիչների հետ հանդիպումներում քննարկվել են հակամարտության գոտում ռազմական

գործողությունների հետևանքով առաջացած հումանիտար ճգնաժամի, Արցախի բնակչությանը և տեղահանված անձանց հումանիտար աջակցության տրամադրման խնդիրները:

Շարունակվել է համագործակցությունը **ՄԱԿ Փախստա–կանների հարցերով բարձրագույն հանձնակատարի (ՓԲՀ) հայաստանյան գրասեն–յակի** հետ: Հանդիպումներ են տեղի ունեցել ՄԱԿ ՓԲՀ հայաստանյան գրասենյակի ղեկավարի հետ: Քննարկվել են փախստականների ու ներքին տեղահանված անձանց աջակցության ցուցաբերման, արտակարգ իրավիճակների արագ արձագանքման հարցում ՄԱԿ ՓԲՀ գրասենյակի հետ առավել արդյունավետ համագործակցության, Արցախի ժողովրդի դեմ Ադրբեջանի կողմից սանձազերծված ագրեսիայի արդյունքում ծագած հումանիտար ճգնաժամի հաղթահարման, Արցախում ՄԱԿ ՓԲՀ ներկայության ապահովման և հրատապ կարիքների գնահատման աշխատանքներին առնչվող հարցեր:

Արցախի դեմ սանձազերծված լայնածավալ պատերազմում Թուրքիայի անմիջական աջակցությամբ ներգրավվել է մինչև 4000 օտարերկրյա վարձկան: Պատերազմի ընթացքում ԱԳ նախարարությունը ՀՀ դիվանագիտական ծառայության մարմինների միջոցով տարածել է Ադրբեջանի կողմից օտարերկրյա ահաբեկիչների օգտագործման թեմայով պատրաստված հուշագիրը և փաստագրական զեկույցը:

3. Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչում և դատապարտում, մարդկության դեմ հանցանքների կանխարգելման օրակարգ

2020թ. Մարդու իրավունքների խորհրդի կողմից ընդունված ժամանակացույցի համաձայն Հայաստանը ներկայացրել է «Ցեղասպանության կանխարգելում» բանաձևը: Արդյունքում, հնարավոր է դարձել ապահովել մեծ թվով երկրների կողմից բանաձևի համահեղինակումը և **հունիսի 22-ին** Ժնևում ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի 43-րդ նստաշրջանում Հայաստանի նախաձեռնությամբ առաջադրված բանաձևն ընդունվել է կոնսենսուսով: Բանաձևի թարմացված տարբերակն արտացոլում է խնդրի վերաբերյալ ժամանակակից աշխարհում տեղի ունեցող զարգացումները և համահունչ է ՄԱԿ կողմից նախանշված գերակայություններին, այն բարձրացնում է համամարդկային նշանակության խնդիրներ, ընդգծում ցեղասպան գործողությունների վաղ կանխարգելման և արձագանքման մեխանիզմների կարևորությունը:

Սեպտեմբերի 24-ին ԱԳ նախարարը ելույթ է ունեցել Պաշտպանելու պատասխանատվության վերաբերյալ 12-րդ նախարարական հանդիպմանը և իր ելույթում անդրադարձել է ցեղասպանության կանխարգելման գործում ՀՀ ջանքերին, ընդգծել վաղ փուլերում ցեղասպանությունն ու այլ զանգվածային ոճրագործությունները

կանխելու անհրաժեշտությունը, նշել ազգային, տարածաշրջանային և միջազգային մակարդակներում կարողությունների զարգացման, ՄԱԿ ցեղասպանության կանխարգելման և պաշտպանության պատասխանատվության գրասենյակի արդյունավետ գործունեության անհրաժեշտության մասին:

Շարունակվել է համագործակցությունը Ցեղասպանության կանխարգելման հարցով ՄԱԿ ԳՔ հատուկ խորհրդականի գրասենյակի և մասնագիտացված այլ կառույցների հետ, փոխանցվել են ադրբեջանական ագրեսիայի և հայերի հանդեպ ատելության տարածման վերաբերյալ զեկույցներ:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի հետ իրականացված աշխատանքի արդյունքում ավարտին է հասել ԵՊՀ-ում Ցեղասպանության և այլ զանգվածային ոճրագործությունների կանխարգելման և կրթության ՅՈՒՆԵՍԿՕ-ի ամբիոնի հիմնադրման գործընթացը: **Մայիսին** կայացել է ԵՊՀ ռեկտորի պաշտոնակատարի և ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրենի միջև ամ–բիոնի ստեղծման վերաբերյալ համաձայնագրի ստորագրումը: **Հունիսի 20-ին** ՀՀ ԱԳ նախարարն ամբիոնի պաշտո–նական բացման արարողության ժամանակ հանդես է եկել հեռավար դասախոսությամբ:

Դեկտեմբերի 9-ին ՀՀ ԱԳՆ-ն, Ցեղասպանության և այլ զանգվածային ոճրագոր–ծությունների կանխարգելման և կրթության ՅՈՒՆԵՍԿՕ-ի ամբիոնի ու Հայաստանի ԻԿՕՄ-ի (Թանգարանների միջազգային կոմիտե) հետ համատեղ ջանքերով ՄԱԿ-ի Ցեղասպանության զոհերի հիշատակի և արժանապատվության և այդ հանցագոր–ծության կանխարգելման միջազգային օրվա կապակցությամբ անցկացրել են «Մշակու–թային ժառանգության ոչնչացումը որպես ցեղասպանության նախազգուշացնող նշան» խորագրով առցանց սեմինար:

4. Ռուսաստանի Դաշնություն

2020թ. ընթացքում ՀՀ-ՌԴ հարաբերությունները շարունակել են զարգացում ապրել՝ չնայած տարեսկզբից կորոնավիրուսային համավարակի տարածմամբ պայմանավորված սահմանափակումներին: Երկկողմ համագործակցության օրակարգում պահպանվել է քաղաքական ակտիվ երկխոսությունը, համագործակցությունը տարածաշրջանային և միջազգային հարթակներում, ռազմական, տնտեսական, առողջապահական, մշակութային և այլ ոլորտներում:
Համավարակով պայմանավորված՝ բարձրագույն և բարձր մակարդակներով փոխայցելությունները նախորդ տարիների համեմատ զգալիորեն նվազել են, իսկ քաղաքական երկխոսությունը հիմնականում ընթացել է հեռախոսազրույցների միջոցով:

Տարվա ընթացքում կայացել են երկկողմ ձևաչափով հանդիպումներ ՀՀ վարչապետի և ՌԴ կառավարության նախագահի միջև, մասնավորապես՝ **հունվարի 31-ին**

Ալմաթիում, **հուլիսի 17-ին** Մինսկում և **հոկտեմբերի 9-ին** Երևանում անցկացվող Եվրասիական միջկառավարական խորհրդի նիստերի շրջանակներում:

Սեպտեմբերի 27-ին Արցախի դեմ սանձազերծված պատերազմի ընթացքում հրադադարի հաստատման շուրջ բանակցություններ են ընթացել ռուսական կողմի հետ, որը հանդես է եկել նաև որպես ռազմական գործողությունների դադարեցման մասին **նոյեմբերի 9-ի** հայտարարության ստորագրող կողմ:

Նոյեմբերի 21-ին տարածաշրջանային այցի շրջանակներում ՌԴ միջգերատեսչական պատվիրակությունը ժամանել է Հայաստան: **Հոկտեմբերի 11-ից 12-ը** և **21-ին** ՀՀ ԱԳ նախարար Զոհրաբ Մնացականյանը Մոսկվայում հանդիպել է ՌԴ ԱԳ նախարար Սերգեյ Լավրովի հետ: Ղարաբաղյան հակամարտության համատեքստում տեղի ունեցող իրադարձությունների քննարկմանն անդրադարձ է կատարվել նաև ինչպես երկկողմ, այնպես էլ՝ բազմակողմ հարթակներում, այդ թվում՝ ՄԱԿ, ԵԱՀԿ շրջանակներում փոխգործակցությանն առնչվող հարցերին:

Դեկտեմբերի 7-ին ՀՀ ԱԳ նախարար Արա Այվազյանի՝ Մոսկվա աշխատանքային այցի ընթացքում Հայաստանի և Ռուսաստանի ԱԳ նախարարները հանգամանորեն քննարկել են ՀՀ-ՌԴ դաշնակցային հարաբերությունները: Պայմանավորվածություն է ձեռք բերվել ՀՀ և ՌԴ ԱԳ նախարարությունների միջև 2020-2021թթ. խորհրդատվությունների ծրագրի կատարման վերաբերյալ, ինչպես նաեւ ՀՀ և ՌԴ միջև տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի 2020թ. Երևանում նախատեսված 20-րդ նիստը 2021 թվականին անցկացնելու մասին:

5. Ամերիկայի Միացյալ Նահանգներ

Հաշվետու տարվա ընթացքում պահպանվել է ԱՄՆ հետ տարբեր մակարդակներում ակտիվ երկխոսությունը, սակայն, համավարակի և Արցախի դեմ սանձնազերծված ագրեսիայի պատճառով հետաձգվել կամ չեղարկվել են մի շարք միջոցառումներ, իսկ որոշներն անցկացվել են հեռավար ձևաչափով:

Մարտի 31-ին և հունիսի 29-ին ՀՀ ԱԳ նախարարը հեռախոսազրույցներ է ունեցել ԱՄՆ պետքարտուղարի փոխտեղակալ Ֆիլիպ Ռիքըրի հետ, որի ընթացքում քննարկվել են երկկողմ օրակարգին, ինչպես նաև կորոնավիրուսային համավարակի տարածման հետևանքով առաջացած մարտահրավերների և դրանց հաղթահարման ուղղությամբ գործադրվող ջանքերին առնչվող հարցեր:

Հունիսին ՀՀ-ն անդամակցել է ԱՄՆ նախաձեռնած Կրոնական ազատությունների միջազգային դաշինքին (International Religious Freedoms Alliance):

Սեպտեմբերին կայացել են հայ-ամերիկյան Ռազմավարական երկխոսության (USASD) երկրորդ նիստի երեք խորհրդակցություններ՝ առցանց ձևաչափով: Սեպտեմբերին առցանց եղանակով կայացել է ՀՀ-ԱՄՆ միջև Առևտրի ու ներդրումների շրջանակային համաձայնագրի (TIFA) խորհրդի հերթական նիստը: Քննարկվել են

աշխատանքի, առևտրի տեխնիկական խոչընդոտների, ԱՄՆ-ի կողմից Հայաստանին տրամադրվող Արտոնությունների ընդհանրացված համակարգ (GSP) ծրագրի, ԱՄՆ ներմուծման սանիտարական և բուսասանիտարական պահանջների, ԱՀԿ շրջանակներում ընթացող բանակցությունների, տնտեսական դիվանագիտության ոլորտում, «COVID-19»-ի առնչությամբ ոլորտային համագործակցության հնարավոր ուղղությունների խնդիրները:

Սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից Արցախի նկատմամբ սանձազերծված ագրեսիայի առաջին իսկ օրերից ՀՀ վարչապետը և ԱԳ նախարարը մշտական կապ են պահպանել ԱՄՆ բարձրաստիճան պաշտոնյաների, այդ թվում՝ ԱՄՆ պետքարտուղար Մայք Պոմպեոյի, ԱՄՆ Ազգային անվտանգության հարցերով խորհրդական Ռոբերտ Օ'Բրայանի, ԱՄՆ պետքարտուղարի տեղակալ Սթիվեն Բիգանի և պետքարտուղարի փոխտեղակալ Ֆիլիպ Ռիքերի հետ: Հեռախոսազրույցների ընթացքում հայկական կողմը ներկայացրել է Արցախի և Ադրբեջանի շփման գծում տիրող իրավիճակը, Ադրբեջանի կողմից ռազմական հանցագործությունների և միջազգային հումանիտար իրավունքի կոպիտ խախտումների վերաբերյալ տեղեկատվությունը:

ԱՄՆ գործադիր և օրենսդիր մարմինների կողմից թե՛ տեղական և թե՛ դաշնային մակարդակներում հնչեցվել են Թուրքիայի աջակցությամբ և Մերձավոր Արևելքից ժամանած վարձկան ահաբեկիչների անմիջական մասնակցությամբ ադրբեջանական ագրեսիան դատապարտող կոչեր և ելույթներ, ինչպես նաև առաջ են քաշվել մի շարք օրենսդրական նախաձեռնություններ:

ԱՄՆ Կոնգրեսում շրջանառության մեջ է դրվել ադրբեջանական ագրեսիան դատապարտող բանաձև (H.Res.1165) :

Պատերազմական գործողությունների ամբողջ ընթացքում Ադրբեջանի և Թուրքիայի գործողությունները դատապարտող հայտարարություններով և ուղերձներով են հանդես եկել ամերիկացի 100-ից ավել օրենսդիրներ, այդ թվում՝ կոնգրեսականներ Ֆրենք Փելոնը, Ջեքի Սփիրը, Ադամ Շիֆը, Գրեյս Նապոլիտանոն, Էլիոթ Էնգելը, հայկական հանձնախմբի այլ անդամներ, իսկ Միչիգան նահանգի ներկայացուցիչների պալատն ընդունել է համապատասխան բանաձև:

Կալիֆորնիա նահանգի Գլենդեյլ, Ֆրեզնո և Ֆաուլեր քաղաքները, Նյու Ջերսի նահանգի Ֆորտ Լի քաղաքը ընդունել են Արցախի ճանաչման բանաձևեր:
Տարածաշրջանում Թուրքիայի ագրեսիվ և ապակայունացնող գործողությունները զսպելու հայտարարությամբ է հանդես եկել նաև նախագահի թեկնածու Ջո Բայդենը:

Հոկտեմբերի 22-ից 25-ը տեղի է ունեցել ՀՀ արտաքին գործերի նախարարի այցն ԱՄՆ: Միացյալ Նահանգների ղեկավարության միջնորդությամբ **հոկտեմբերի 25-ին** Վաշինգտոնում կայացել է հանդիպում ՀՀ ԱԳ նախարար Զոհրաբ Մնացականյանի և ԱՀ ԱԳ նախարար Ջեյհուն Բայրամովի միջև: Հանդիպման արդյունքներով, և ի

հավելումն **հոկտեմբերի 10-ի և 17-ի** պայմանավորվածությունների, համաձայնություն է ձեռք բերվել հրադադարի հաստատման վերաբերյալ, որը սակայն չի պահպանվել:

2020թ. ավարտին են հասցվել ԱՄՆ Կոնգրեսի Ժողովրդավարական գործընկերության հանձնաժողովը և ՀՀ ԱԺ-ն գործընկեր կառույց դարձնելու ընթացակարգերը:

6. Եվրոպական Միություն

Հունվարի 21-ից 24-ը Հայաստան այցի շրջանակում Եվրոպական հանձնաժողովի հարևանության և ընդլայնման բանակցությունների գլխավոր տնօրինության Արևելյան գործընկերության բաժնի ղեկավար Վասիլիս Մարագոսը հանդիպումներ է ունեցել ՀՀ տարբեր պաշտոնյաների հետ:

Փետրվարի 14-ին Մյունխենի անվտանգության համաժողովի շրջանակներում կայացել է ՀՀ ԱԳ նախարարի հանդիպումը Եվրոպական հանձնաժողովի փոխնախագահ, Եվրոպական կենսակերպի խթանման հարցերով հանձնակատար Մարգարիտիս Սկինասի հետ:

Փետրվարի 18-ին Հարավային Կովկասում և Վրաստանի ճգնաժամի հարցերով ԵՄ հատուկ ներկայացուցիչ Տոյվո Կլաարին ՀՀ-ում ընդունել են ՀՀ վարչապետը և ՀՀ ԱԳ նախարարը:

Մարտի 9-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի Բրյուսել աշխատանքային այցի ընթացքում հանդիպումներ են կայացել Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելի, ԵԺԿ նախագահ Դոնալդ Տուսկի և ԵՄ բարձր ներկայացուցիչ Ժոզեպ Բորելի հետ:

Մայիսի 5-ին ՀՀ փոխվարչապետ Մհեր Գրիգորյանը տեսազանգ է ունեցել ԵՄ հարևանության և ընդլայնման հարցերով հանձնակատար Օլիվեր Վարհեիի հետ, որին մասնակցել է ՀՀ ԱԳ նախարարը:

Սեպտեմբերի 30-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հեռախոսազրույց է ունեցել Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելի հետ:

Հոկտեմբերի 3-ին, 18-ին և **նոյեմբերի 12-ին,** պատերազմական իրավիճակով պայմանավորված, ՀՀ ԱԳ նախարար Զոհրաբ Մնացականյանը հեռախոսազրույցներ է ունեցել ԵՄ ԱԳ և անվտանգության քաղաքականության հարցերով բարձր ներկայացուցիչ Ժոզեպ Բորելի հետ:

Հոկտեմբերի 21-ից 22-ը Բրյուսել կատարած այցի շրջանակներում նախագահ Արմեն Սարգսյանը հանդիպումներ է ունեցել Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելի և ԵՄ ԱԳ անվտանգության քաղաքականության հարցերով բարձր ներկայացուցիչ Ժոզեպ Բորելի և հետ:

Դեկտեմբերի 17-ին Բրյուսել կատարած աշխատանքային այցի շրջանակներում տեղի են ունեցել ԱԳ նախարար Արա Այվազյանի երկկողմ մի շարք հանդիպումները ԵՄ մի շարք պաշտոնյաների, այդ թվում ԵՄ բարձր ներկայացուցիչ Ժոզեպ Բորելի հետ:

2020թ. ընթացքում **Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի** վավերացման համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերն ավարտել և այդ մասին Եվրոպական խորհրդի և ԵՄ խորհրդի գլխավոր քարտուղարությանն են տեղեկացրել Խորվաթիան, Շվեդիան, Սլովենիան, Նիդերլանդները, Ֆրանսիան, Ավստրիան, Բելգիան, Հունաստանը, Իսպանիան և Իտալիան: 2020թ. դեկտեմբերի 12-ին Պորտուգալիայի նախագահը վավերացրել է ավելի վաղ երկրի օրենսդիր մարմնի՝ Պորտուգալիայի Ասամբլեայի կողմից ՀՀ-ԵՄ ՀԸԳՀ հաստատելու մասին բանաձևը: Արդյունքում Համաձայնագիրը վավերացվել է ԵՄ անդամ բոլոր երկրների և ԵՄ կողմից և 2021 թվականի մարտի 1-ից ամբողջությամբ ուժի մեջ է մտնելու:

Դեկտեմբերի 17-ին Բրյուսելում կայացել է ՀՀ-ԵՄ Գործընկերության խորհրդի 3-րդ նիստը, ուր ՀՀ պատվիրակությունը ղեկավարել է ՀՀ ԱԳ նախարար Արա Այվազյանը, իսկ ԵՄ կողմից՝ արտաքին գործերի և անվտանգության քաղաքականության հարցերով ԵՄ բարձր ներկայացուցիչ Ժոզեպ Բորելը: Նիստի՝ սահմանափակ ձևաչափում քննարկվել են նաև քաղաքական և տարածաշրջանային հարցեր՝ գլխավորապես ԼՂ հակամարտությունը:

Հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին տեղի են ունեցել **Արևելյան գործընկերություն (ԱլԳ)** բոլոր պլատֆորմների և պանելների առցանց հանդիպումներ, որոնց մասնակցել են ՀՀ համապատասխան գերատեսչությունների և ՀՀ ԱԳՆ ներկայացուցիչներ:

ՀՀ ԱԳ նախարարությունը, ՀՀ շահագրգիռ գերատեսչությունների հետ միասին մշակել և ԵՄ արտաքին գործերի և անվտանգության քաղաքականության հարցերով բարձր ներկայացուցչին, հարևանության և ընդլայնման հարցերով ԵՄ հանձնակատարին է ներկայացրել ԱլԳ ապագա օրակարգի իր տեսլականը: ՀՀ առաջնահերթությունների շարքում են տարածաշրջանային կապակցվածության ներառական ծրագրերի նախաձեռնումը, ԱլԳ ամբողջականության պահպանումը, տարածաշրջանային հակամարտությունների նկատմամբ ԵՄ կողմից տարբերակված մոտեցման ցուցաբերումը, արդարադատության ոլորտում բարեփոխումները, «COVID-19» համավարակի դեմ պայքարը, մարդկանց միջև շփումների ակտիվացումը և այլն:

Համավարակի հետևանքները հաղթահարելու նպատակով 2020թ. ԵՄ-ն Հայաստանին տրամադրել է շուրջ 92 մլն եվրո, որից 38.5 մլն եվրոն ձևավորվել է 2015-2017թթ. ընթացքում կնքված բյուջետային աջակցության ծրագրերի վերակառուցումից:

Դեկտեմբերի 22-ին Եվրոպական միությունը ՀՀ կառավարությանը հայտնել է կորոնավիրուսային համավարակի հետևանքների մեղմման նպատակով 24 մլն եվրոյի չափով ֆիքսված գումարի հատկացումը հաստատելու որոշման մասին:

7. Հարևան երկրներ

2020թ. շարունակվել է փոխգործակցությունը Վրաստանի և Իրանի հետ, քայլեր են ձեռնարկվել խորացնելու հարաբերությունները ամենատարբեր ուղղություններով, սակայն կորոնավիրուսի համավարակի և արցախյան պատերազմի պատճառով տարին աչքի է ընկել փոխայցելությունների սակավաթվությամբ:

7.1 Վրաստան

2020թ. երկկողմ փոխայցելությունները տեղի են ունեցել մինչև համավարակով պայմանավորված սահմանափակումների կիրառումը, հետագայում շփումներն ընթացել են հեռախոսազրույցների միջոցով:

Փետրվարի 27-ից 28-ը տեղի է ունեցել Վրաստանի պաշտպանության նախարար Իրակլի Ղարիբաշվիլիի պաշտոնական այցը Հայաստան: Ստորագրվել է պաշտպանության ոլորտում համագործակցության ծրագիր:

Մարտի 3-ին տեղի է ունեցել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի պաշտոնական այցը Վրաստան: Այցի ընթացքում հանդիպումներ են տեղի ունեցել Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլիի, վարչապետ Գեորգի Գախարիայի, խորհրդարանի նախագահ Թալակվաձեի և Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդի հետ:

Մարտի 13-ին ՀՀ և Վրաստանի վարչապետների միջև տեղի ունեցած հեռախոսազրույցից հետո որոշում է կայացվել մարտի 14-ից դադարեցնել քաղաքացիների շարժը հայ-վրացական սահմանային անցակետերով (կորոնավիրուսային համավարակի տարածման կանխարգելման սահմանափակումների պատճառով) ՝ թույլատրելով միայն հայրենիք վերադարձող քաղաքացիների մուտքը: Սահմանափակումը չի տարածվել բեռնափոխադրումների վրա:

Վրաստանի ԱԳ նախարարը հեռախոսազրույցներ է ունեցել ՀՀ ԱԳ նախարարի հետ՝ ընդգծելով ռազմական գործողությունների դադարեցման կարևորությունը:

Սեպտեմբերի 27-ին Արցախում Ադրբեջանի կողմից սանձազերծված ռազմական գործողությունների ծավալումից ի վեր Վրաստանի իշխանությունների ներկայացուցիչները իրենց պաշտոնական հայտարարություններում պահպանել են չեզոք դիրքորոշում:

Նոյեմբերի 10-ին ՀՀ վարչապետը հեռախոսազրույց է ունեցել Վրաստանի վարչապետ Գեորգի Գախարիայի հետ, որի ընթացքում քննարկվել են ԼՂ-ում ստեղծված իրավիճակին և տարածաշրջանին վերաբերող հարցեր:

7.2 Իրանի Իսլամական Հանրապետություն

2020թ. շարունակական ջանքեր են գործադրվել խորացնելու հայ-իրանական բարիդրացիական հարաբերությունները՝ քաղաքական, տնտեսական, գիտակրթական և այլ բնագավառներում:

Հաշվետու ժամանակահատվածում կորոնավիրուսի տարածման պատճառով, սակայն, նախապես համաձայնեցված միջպետական և միջմարզային մի շարք փոխայցեր չեղարկվել են, իսկ երկկողմ կարևոր հանդիպումները և միջոցառումներն իրականացվել են առցանց՝ տեսակոնֆերանսների ձևաչափով:

Քաղաքական երկխոսության տեսանկյունից կարևոր են եղել ՀՀ վարչապետ-ԻԻՀ նախագահ և ԱԳ նախարարների մակարդակով հեռախոսազրույցները:

Սեպտեմբերի 27-ին Արցախում ռազմական գործողությունների մեկնարկից հետո Իրանը փորձել է նպաստել տարածաշրջանում խաղաղության հաստատմանը: Հայտարարություններով են հանդես եկել Իսլամական հեղափոխության գերագույն առաջնորդը, Իսլամական հեղափոխության գերագույն առաջնորդի միջազգային հարցերով խորհրդականը, ԻԻՀ նախագահը և ԻԻՀ ԱԳ նախարարը:

Հոկտեմբերի 27-ից 31-ը Իրանը նախաձեռնել է հատուկ բանագնաց, ԻԻՀ փոխարտգործնախարար Սեյեդ Աբբաս Արաղչիի գործուղումը Բաքու, Մոսկվա, Երևան և Անկարա միջնորդական առաքելությամբ, որը, սակայն, հաջողությամբ չի պսակվել:

7.3 Թուրքիայի Հանրապետություն

2020թ. Թուրքիան շարունակել է իր բացահայտ հակահայկական և Հայոց ցեղասպանության ժխտողականության քաղաքականությունը, արցախյան հիմնախնդրի խաղաղ կարգավորման առնչությամբ հանդես է եկել միակողմանի և ռազմատենչ հայտարարություններով՝ սատարելով և առավելագույնս աջակցելով Ադրբեջանի այլատյացության և հայատյացության վրա հիմնված նկրտումներին:

Սեպտեմբերի 27-ին Թուրքիայի աջակցությամբ և ահաբեկիչների ներգրավմամբ Ադրբեջանը ռազմական գործողություններ է սանձազերծել Արցախի խաղաղ բնակչության դեմ: Պատերազմի ողջ ընթացքում Թուրքիան ցուցաբերել է նյութական և ռազմատեխնիկական օժանդակություն:

8. Եվրասիական տարածաշրջանի երկրներ

Բելառուսի Հանրապետության հետ երկկողմ հետաքրքրություն ներկայացնող հարցերի շուրջ հաշվետու տարում տեղի են ունեցել հեռախոսազրույցներ ՀՀ

նախագահի, վարչապետի, ԱԳ նախարարի և Բելառուսի համապատասխան գործընկերների միջև:

Մարտին Երևանում կայացել է Առևտրատնտեսական համագործակցության հայ-բելառուսական միջկառավարական հանձնաժողովի 14-րդ նիստը և գործարար համաժողովը:

Երկու երկրների ԱԳ նախարարությունները սերտորեն համագործակցել են «COVID-19» համավարակի տարածման առաջին իսկ օրվանից, այդ թվում՝ քաղաքացիներին հայրենիք վերադարձնելու ուղղությամբ, ինչն իրականացվել է «Բելավիա» ավիաընկերության կանոնավոր չվերթների միջոցով:

Հուլիսի 17-ին Մինսկում, Եվրասիական միջկառավարական խորհրդի նիստի շրջանակներում, կայացել է ՀՀ վարչապետի հանդիպումը ԲՀ նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոյի հետ:

Հայաստանի և **Ղազախստանի** ԱԳ նախարարությունները սերտորեն համագործակցել են «COVID-19» համավարակի տարածման հետևանքով քաղաքացիներին տարհանելու ուղղությամբ:

Հաշվետու տարում երկու երկրների ԱԳ նախարարությունների միջև տեսակապի ձևաչափով անցկացվել են քաղաքական խորհրդատվություններ՝ փոխնախարարների մակարդակով: Աշխատանքներ են տարվել Տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի նիստի կազմակերպման, ինչպես նաև երկու երկրների ԱԳ նախարարությունների միջև համագործակցության ծրագրի ստորագրման շուրջ:

2020թ. առաջին կիսամյակում աշխատանքներ են տարվել ՀՀ վարչապետի՝ Քիշնև այցի կազմակերպման, ինչպես նաև Հայաստան-**Մոլդովա** միջկառավարական հանձնաժողովի առաջին նիստի կազմակերպման ուղղությամբ, որոնց անցկացումը հետաձգվել է նոր տիպի կորոնավիրուսի տարածման հետևանքով:

Փետրվարի 24-ին կայացել է ՄՀ խորհրդարանի նախագահի գլխավորած պատվիրակության այցը Հայաստան:

Նոյեմբերի 27-ին կայացել է ՀՀ ԱԳ նախարար Արա Այվազյանի հեռախոսազրույցը ՄՀ ԱԳ նախարարի հետ: Մոլդովական կողմի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել ՀՀ ներկայացվածությունը ոչ ռեզիդենտ դեսպանի միջոցով ապահովելու վերաբերյալ:

2020թ. **հուլիսին Ուզբեկստանի** Օլիյ Մաժլիսի Օրենսդիր պալատում ձևավորվել է ՀՀ ԱԺ հետ համագործակցության միջխորհրդարանական խումբը, իսկ **նոյեմբերին** ՀՀ ԱԺ-ում ձևավորվել է Հայաստան-Ուզբեկստան բարեկամական խումբը:

Ապրիլի 30-ին ուկրաինական կողմի նախաձեռնությամբ կայացել է Հայաստանի և **Ուկրաինայի** ԱԳ նախարարների հեռախոսազրույցը:

Հունիսի 26-ին երկու երկրների ԱԳ նախարարությունների միջև կայացել են տեսակապի ձևաչափով քաղաքական խորհրդակցություններ:

9. Եվրոպական երկրներ

Հունվարի 23-ին Հայաստան է ժամանել **Նիդերլանդների** ԱԳ նախարար Ստեֆ Բլոկը: Տեղի են ունեցել հանդիպումներ ՀՀ վարչապետի և ԱԳ նախարարի հետ:

Սեպտեմբերի 29-ին ԱԳ նախարար Զոհրաբ Մնացականյանը հեռախոսազրույց է ունեցել Նիդերլանդների արտաքին գործերի նախարար Ստեֆ Բլոկի հետ: Ներկայացվել է Ադրբեջանի կողմից լայնածավալ ռազմական գործողությունների արդյունքում Հայաստանի հետ սահմանին և Լեռնային Ղարաբաղի հետ շփման գծում իրավիճակը:

Հոկտեմբերի 13-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հեռախոսազրույց է ունեցել Նիդերլանդների վարչապետ Մարկ Ռուտեի հետ: **Սեպտեմբերի 27-ին** կրակի անհապաղ դադարեցման պահանջով հայտարարությամբ է հանդես է եկել ԱԳ նախարար Ստեֆ Բլոկը:

Հոկտեմբերի 6-ին Նիդերլանդների Խորհրդարանի ստորին պալատում ընդունվել է բանաձև, որով կառավարությանը կոչ է արվում միջոցներ ձեռնարկել Թուրքիային ղարաբաղյան պատերազմին միջամտելուց զերծ պահելու ուղղությամբ:

Դեկտեմբերի 8-ին ընդունվել է բանաձև ԼՂ հակամարտության կարգավորման անհրաժեշտության և Արցախի կարգավիճակի հստակեցման վերաբերյալ:

Փետրվարի 13-ից 15-ը Մյունխենի անվտանգության համաժողովի շրջանակներում վարչապետ Նիկոլ Փաշինյանը հանդիպել է **Նորվեգիայի** վարչապետ Էռնա Սոլբերգին:

Հոկտեմբերի 26-ին Նորվեգիայի ԱԳՆ-ն հանդես է եկել հայտարարությամբ, որում խոր մտահոգություն է հայտնել ԼՂ հակամարտության գոտում իրավիճակի սրման կապակցությամբ և աջակցություն հայտնել ԵԱՀԿ Մինսկի խմբի ձևաչափին:

Փետրվարի 18-ից 19-ը տեղի է ունեցել ՀՀ ԱԺ նախագահ Արարատ Միրզոյանի պաշտոնական այցը **Դանիա**:

Հոկտեմբերի 10-ին Դանիայի ԱԳՆ հանդես է եկել հայտարարությամբ, որում անհանգստություն է հայտնել արցախա-ադրբեջանական շփման գծում տիրող իրավիճակի կապակցությամբ և աջակցություն է հայտնել ԵԱՀԿ համանախագահներին:

Սեպտեմբերի 30-ին կայացել է ԱԳ նախարար Մնացականյանի հեռախոսազրույցը **Շվեդիայի** ԱԳ նախարար Լինդեի հետ: ՀՀ ԱԳ նախարարը ներկայացրել է Արցախի դեմ Ադրբեջանի սանձազերծած ագրեսիայի հետևանքով ստեղծված իրադրությունը:

Դեկտեմբերի 22-ին ԱԳ նախարար Արա Այվազյանը տեսազրույց է ունեցել Շվեդիայի ԱԳ նախարարի հետ: Անդրադարձ է կատարվել Արցախի ժողովրդի դեմ

ադրբեջանական ագրեսիային, որն ուղեկցվել է մարդու իրավունքների ծանրագույն և զանգվածային խախտումներով, պատերազմական հանցագործություններով:

Հոկտեմբերի 4-ին հայտարարությամբ հանդես է եկել Շվեդիայի ԱԳ նախարար Անն Լինդեն՝ Հայաստանին ու Ադրբեջանին կոչ անելով վերսկսել խաղաղ բանակցությունները: Կարևորել է հակամարտությունում երրորդ երկրի ներգրավվածության բացառումը:

Հոկտեմբերի 5-ին ՀՀ ԱԳ նախարար Զոհրաբ Մնացականյանը հեռախոսազրույց է ունեցել **Ֆինլանդիայի** արտաքին գործերի նախարար Պեկկա Հաավիստոյի հետ, որի ընթացքում կողմերը քննարկել են Արցախի շուրջ ստեղծված իրավիճակը:

Հոկտեմբերի 10-ին Ֆինլանդիայի ԱԳ նախարար Հաավիստոն հանդես է եկել հայտարարությամբ, ողջունել է հրադադարի պայմանավորվածությունը և աջակցություն է հայտնել Մինսկի խմբի համանախագահության շրջանակներում հակամարտության կարգավորմանը:

Հոկտեմբերի 12-ին ԵՄ Արտաքին գործերի խորհրդում **Լյուքսեմբուրգի** ԱԳ նախարար Ժան Ասելբորնն անդրադարձել է արցախյան պատերազմին՝ մասնավորապես նշելով, որ ակնհայտ է, որ Ադրբեջանն է նախահարձակ եղել, բացի այդ, հակամարտության գոտի վարձկանների տեղափոխումը Ադրբեջանի կողմից կռվելու նպատակով որևէ արդարացում չունի:

Հոկտեմբերի 15-ին Լյուքսեմբուրգի խորհրդարանն ընդունել է Արցախի դեմ սանձազերծված պատերազմը դատապարտող բանաձև, կոչ արել կառավարությանը՝ դատապարտել 1994թ. զինադադարի դրույթներին հակասող ռազմական բոլոր քայլերը, հակամարտող կողմերից մեկին աջակցող արտաքին միջամտությունը:

Դեկտեմբերի 24-ին Լյուքսեմբուրգի խորհրդարանն ընդունել է բանաձև ԼՂ կարգավիճակի վերջնական որոշման անհրաժեշտության վերաբերյալ:

Ապրիլի 30-ին կայացել է ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանի տեսազրույցը **Լիտվայի** նախագահ Գիտանաս Նաուսեդայի հետ:

Մայիսի 8-ին ՀՀ վարչապետ Փաշինյանը տեսահանդիպում է ունեցել Լիտվայի նախագահ Նաուսեդայի հետ: Կողմերը մտքեր են փոխանակել իրենց երկրներում և աշխարհում կորոնավիրուսի համավարակի դեմ պայքարի ուղղությամբ ձեռնարկվող քայլերի շուրջ: Անդրադարձ է եղել Հայաստան–ԵՄ հարաբերությունների օրակարգին:

Հուլիսի 17-ին կայացել է ՀՀ ԱԳ նախարար Զոհրաբ Մնացականյանի և Լիտվայի ԱԳ նախարար Լինաս Լինկևիչուսի հեռախոսազրույցը:

Սեպտեմբերի 27-ին և **հոկտեմբերի 2-ին կայացել** է ՀՀ ԱԳ նախարարի և Լիտվայի ԱԳ նախարարի հեռախոսազրույցը՝ ադրբեջանական ագրեսիայի հետևանքով ստեղծված զարգացումները ներկայացնելու նպատակով:

Նոյեմբերի 19-ին և **դեկտեմբերի 28-ին** կայացել է ՀՀ ԱԳ նախարարի և Լիտվայի ԱԳ նախարարի հեռախոսազրույցը:

Փետրվարի 15-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը Մյունխենի անվտանգության համաժողովի շրջանակում հանդիպել է **Լատվիայի** նախագահ Էգիլս Լևիցի հետ: Կողմերն անդրադարձել են երկկողմ համագործակցության խթանման հարցին, խոսել են Հայաստան-ԵՄ համագործակցության զարգացման, ինչպես նաև Հայաստանի ժողովրդավարական բարեփոխումների օրակարգի և այդ ուղղությամբ համագործակցության մասին:

Հուլիսի 7-ին ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանը հեռախոսազրույց է ունեցել Լատվիայի նախագահ Էգիլս Լևիթսի հետ:

Սեպտեմբերի 29-ին և նոյեմբերի 27-ին կայացել է ՀՀ ԱԳ նախարար Զոհրաբ Մնացականյանի և Լատվիայի ԱԳ նախարար Էդգարս Ռինկևիչսի հեռախոսազրույցը: ՀՀ ԱԳ նախարարը ներկայացրել է Ադրբեջանի կողմից լայնածավալ ռազմական գործողությունների արդյունքում Հայաստանի հետ սահմանին և ԼՂ-Ադրբեջան շփման գծում զարգացումները: ՀՀ ԱԳ նախարարը տեղեկություն է տրամադրել ադրբեջանական լայնամասշտաբ ագրեսիայի հետևանքով Արցախում հումանիտար ճգնաժամի և դրա հաղթահարման ուղղությամբ ձեռնարկվող քայլերի վերաբերյալ: Նախարարները կարևորել են խաղաղ կարգավորումը բացառապես ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության շրջանակներում:

Հունիսի 10-ին կայացել է Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանի և **Էստոնիայի** նախագահ Կերստի Կալյուլայդի տեսահանդիպումը: Նախագահները տեղեկություններ են փոխանակել համավարակային իրավիճակի, դրա կանխարգելման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումների վերաբերյալ, քննարկել են համավարակի դեմ պայքարում համագործակցության հնարավորությունները:

Սեպտեմբերի 27-ին և **հոկտեմբերի 18-ին** կայացել է ՀՀ ԱԳ նախարար Զոհրաբ Մնացականյանի և Էստոնիայի ԱԳ նախարար Ուրմաս Ռեյնսալուի հեռախոսազրույցը՝ ադրբեջանական ագրեսիայի հետևանքով առաջացած իրավիճակը ներկայացնելու նպատակով:

Դեկտեմբերի 15-ին կայացել է ՀՀ ԱԳ նախարար Արա Այվազյանի և Էստոնիայի ԱԳ նախարար Ուրմաս Ռեյնսալուի հեռախոսազրույցը: ՀՀ ԱԳ Նախարարը ներկայացրել է ԼՂ հետպատերազմյան իրավիճակը և բարձր է գնահատել Էստոնիայի դերը՝ ուղղված տարածաշրջանում խաղաղության հաստատմանը:

Սեպտեմբերի 27-ին, **հոկտեմբերի 2-ին, նոյեմբերի 10-ին Ֆրանսիայի** Արտաքին և եվրոպական գործերի նախարար Ժան-Իվ լը Դրիանը հանդես է եկել ադրբեջանական ագրեսիան դատապարտող հայտարարություններով:

Սեպտեմբերի 29-ին Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը հանդես է եկել հասցեական հայտարարությամբ՝ մտահոգություն հայտնելով Թուրքիայի

գործողությունների, վարձկանների ներգրավման և Ադրբեջանի նախահարձակ լինելու կապակցությամբ, ինչպես նաև իր զորակցություն է հայտ–նել հայկական կողմին:

Նոյեմբերի 10-ին ԼՂ-ում զինադադար հաստատելու վերաբերյալ եռակողմ հայտարարությունից հետո հրապարակվել է Ֆրանսիայի նախագահության հայտարարությունը, ըստ որի Ֆրանսիան՝ 1. ուսումնասիրում և վերլուծում է հայտարարությունը, 2. ակնկալում է, որ Ադրբեջանի ստանձնած պարտավորությունները խստիվ պահպանվեն և հարձակումներն անմիջապես կդադարեցվեն, 3. կոչ է անում Թուրքիային չձեռնարկել որևէ քայլ, որը կարող է վնասել այդ նպատակին, 4. վերահաստատում է բարեկամությունը հայ ժողովրդի նկատմամբ: Շեշտվել է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության շրջանակներում բանակցություններին անցնելու կարևորությունը՝ հակամարտության վերջնական կարգավորման համար:

Կայացել են մի շարք հեռախոսազրույցներ ՀՀ վարչապետի և Ֆրանսիայի նախագահի, ինչպես նաև Հայաստանի և Ֆրանսիայի ԱԳ նախարարների միջև:

Հոկտեմբերի 3-ին Ֆրանսիայի 176 սենատոր և պատգամավոր հանդես են եկել կառավարությանն ուղղված բաց նամակով՝ կոչ անելով դատապարտել ադրբեջանական ագրեսիան և պահանջել դրա անմիջական դադարեցում, հակառակ դեպքում պատրաստակամություն հայտնելով լիակատար օգնություն ցուցաբերել Լեռնային Ղարաբաղի իշխանություններին՝ սկսելով Արցախի լիիրավ ճանաչումից:

Հոկտեմբերի 23-ին կայացել է ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանի այցը Փարիզ: Նախագահը հանդիպել է Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի հետ:

Նոյեմբերի 16-ին Ֆրանսիայի 16 խոշոր քաղաքների քաղաքապետեր հանդես են եկել Արցախի անկախությունը ճանաչելու՝ կառավարությանն ուղղված կոչով:

Նոյեմբերի 25-ին 305 կողմ, 1 դեմ և 20 ձեռնպահ ձայներով Ֆրանսիայի Սենատն ընդունել է «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ճանաչման անհրաժեշտության վերաբերյալ» բանաձևը, որը ներկայացվել էր Սենատի 5 քաղաքական խմբակցությունների կողմից: Բանաձևը, մասնավորապես, կոչ է անում ճանաչել ԼՂ անկախությունը և դատապարտել թուրք-ադրբեջանական ագրեսիան:

Նոյեմբերի 28-ին ՖՀ ԱԳՆ պետքարտուղար Ժան-Բատիստ Լըմուանը ժամանել է Հայաստան: Երևանում տեղի են ունեցել հանդիպումներ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի, ԱԳ նախարար Արա Այվազյանի և Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ի հետ:

Դեկտեմբերի 3-ին Ֆրանսիայի Ազգային ժողովը ընդունել է Բանաձև Լեռնային Ղարաբաղի անկախության ճանաչման անհրաժեշտության մասին:

Դեկտեմբերի 6-ից 8-ը կայացել է Ֆրանսիայի սոցիալիստական կուսակցության առաջին քարտուղար Ֆորի գլխավորած պատվիրակության այցը ՀՀ և Արցախ:

Դեկտեմբերի 8-ից 10-ը կայացել է ՀՀ ԱԳ նախարար Արա Այվազյանի աշխատանքային այցը Ֆրանսիա, որտեղ տեղի է ունեցել նրա հանդիպումը ՖՀ Սենատի նախագահ Ժերար Լարշեի, Արտաքին գործերի նախարար Ժան-Իվ լը Դրիանի, Ֆրանսիայի Ազգային ժողովի ազգային պաշտպանության և զինված ուժերի հանձնաժողովի նախագահ Ֆրանսուազ Դյումայի և ԱԺ Ֆրանսիա-Հայաստան բարեկամական խորհրդի պատգամավորների, ՅՈՒՆԵՍԿՕ-ի Գլխավոր տնօրեն Օդրի Ազուլեի, Ֆրանկոֆոնիայի Միջազգային կազմակերպության գլխավոր քարտուղար Լուիզ Մուշիկիվաբոյի հետ:

Դեկտեմբերի 8-ին ՖՀ Եվրոպայի և Արտաքին գործերի նախարար Ժան-Իվ լը Դրիանը նշել է, որ եռակողմ հայտարարությունից հետո ստեղծված ծանր իրավիճակում Ֆրանսիայի գործողությունները կկենտրոնանան 3 ուղղություններով՝ հումանիտար աջակցություն, մշակութային և կրոնական ժառանգության պահպանումը Լեռնային Ղարաբաղում և շրջակայքում, վերադարձ բանակցությունների սեղանին:

Արցախում պատերազմի սկզբից ի վեր Ֆրանսիայի 66 վարչա–տա–ռածքային միավոր, այդ թվում՝ 7 շրջան, 4 մետրոպոլ, 7 դեպարտամենտ և 46 քաղաք (համայնք) ընդունել է ԼՂ վերաբերյալ բանա–ձևեր, որոնցից 40-ը պարունակում է Արցախի Հանրապետության ճանաչման մասին դրույթ:

Հոկտեմբերի 14-ին Ֆլամանական խորհրդարանը միաձայն ընդունել է ԼՂ հակամարտության սրացումը դատապարտող բանաձև:

Դեկտեմբերի 11-ին Բելգիայի Սենատը 50 կողմ և 3 ձեռնպահ ձայներով ընդունել է «Աջակցություն Լեռնային Ղարաբաղում հրադադարի հաստատմանը և տևական կարգավորման հասնելու Բելգիայի և միջազգային կառույցների նախաձեռնություններին» խորագրով բանաձևը:

Դեկտեմբերի 18-ին Բելգիայի Ներկայացուցիչների պալատն ընդունել է «Աջակցություն Լեռնային Ղարաբաղում հրադադարի հաստատմանը և տևական կարգավորման հասնելու Բելգիայի և միջազգային կառույցների նախաձեռնություններին» բանաձևը:

Դեկտեմբերի 17-ին կայացել է ՀՀ ԱԳ նախարար Արա Այվազյանի և ԲԹ ԱԳ նախարար Սոֆի Վիլմեսի հանդիպումը: Նախարարներն անդրադարձել են տարածաշրջանային անվտանգության հարցերին, Արցախի ժողովրդի դեմ ադրբեջանական ագրեսիայի հետևանքների վերացման ուղղությամբ ձեռնարկվող քայլերին: Կարևորվել է խաղաղ կարգավորման հարցերի հասցեագրումը ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության շրջանակներում:

Հոկտեմբերի 7-ին Ժնևի քաղաքային խորհուրդը բանաձև է ընդունել ԼՂ ժողովրդի ինքնորոշման իրավունքի վերաբերյալ:

Հոկտեմբերի 23-ին կայացել է ՀՀ ԱԳ նախարար Զոհրաբ Մնացականյանի և **Շվեյցարիայի Համադաշնության** ԱՀԴԴ պետքարտուղար Իգնասիո Կասիսի

հեռախոսազրույցը: Վերջինս վերահաստատել է Շվեյցարիայի աջակցությունը ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների ջանքերին՝ ուղղված ԼՂ հիմնահարցի խաղաղ հանգուցալուծմանը:

ԼՂ հակամարտության վերաբերյալ հայտարարություններ են ընդունել **Իսպանիայի** Բասկերի երկրի խորհրդարանը, «Միասին կարող ենք» կուսակցությունը, Կատալոնիայի Սենատը:

Արցախի Հանրապետության ճանաչման և ադրբեջանական ագրեսիայի դատապարտման վերաբերյալ բանաձևեր են ընդունել Ամպոստա, Գերնիկա-Լումո, Սան-Սեբաստիան, Բերգա քաղաքները:

Սեպտեմբերի 28-ին, հոկտեմբերի 19-ին և 28-ին ՀՀ ԱԳ նախարար Զոհրաբ Մնացականյանը հեռախոսազրույցներ է ունեցել **Միացյալ Թագավորության** Եվրոպական քաղաքականության և Ամերիկայի հարցերով մշտական քարտուղար Ուենդի Մորթնի հետ:

Նոյեմբերի 30-ին կայացել է ՀՀ ԱԳ նախարար Արա Այվազյանի հեռախոսազրույցը ՄԹ Եվրոպական հարևանության և Ամերիկայի հարցերով մշտական քարտուղար Մորթնի հետ: Այվազյանն ընդգծել է արցախահայության իրավունքների վերականգնման կարևորությունը, Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքը:

Դեկտեմբերի 12-ին ՀՀ նախագահը մասնակցել է Լոնդոնում առցանց անցկացվող «Կլիմայական հավակնությունների համաժողովին» (Climate Ambition Summit)՝ նվիրված Փարիզյան համաձայնագրի 5-ամյակին:

Սեպտեմբերի 29-ին կայացել է ՀՀ ԱԳ նախարար Զոհրաբ Մնացականյանի և **Ավստրիայի** ԱԳ նախարար Ալեքսանդր Շալլենբերգի հեռախոսազրույցը:

Հոկտեմբերի 14-ին Ավստրիայի Ազգային խորհրդի կողմից միաձայն ընդունվել է բանաձև՝ «Լեռնային Ղարաբաղի տարածաշրջանում առկա իրավիճակի վերաբերյալ»:

Փետրվարի 13-ից 14-ը ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը **Գերմանիայում** հանդիպումներ է ունեցել կանցլեր Անգելա Մերկելի, Բունդեսթագի նախագահ Շոյբլեի հետ, այցելել է Էբերթ հիմնադրամ, Գերմանիայի առևտրաարդյունաբերական պալատ:

Նոյեմբերի 24-ին ԳԴՀ Բունդեսթագն ընդունել է 19/24646 հայցադիմումը՝ «Աջակցություն ԼՂ-ում տևական խաղաղության հաստատման զարգացումներին»:

Փետրվարի 14-ից 16-ը Մյունխենի անվտանգության միջազգային համաժողովի շրջանակում ՀՀ ԱԳ նախարար Զոհրաբ Մնացականյանը հանդիպել է **Իտալիայի** արտաքին գործերի և միջազգային համագործակցության նախարար Լուիջի Դի Մայոյի հետ:

Ապրիլի 30-ին կայացել է ՀՀ ԱԳ նախարար Զոհրաբ Մնացականյանի և Իտալիայի արտաքին գործերի և միջազգային համագործակցության նախարար Լուիջի Դի Մայոյի հեռախոսազրույցը:

Նոյեմբերի 18-ին Իտալիայի Պատգամավորների պալատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովն ընդունել է բանաձև, որում նշվում է, որ՝ ա. Լեռնային Ղարաբաղը պատմականորեն մեծամասամբ հայերով բնակեցված դե ֆակտո անկախ պետություն է, բ. հարձակումը նախաձեռնողը եղել է Ադրբեջանը, և Թուրքիան ակնհայտորեն սատարել է ադրբեջանական ռազմական ինտերվենցիային, գ. ռազմական գործողություններին մասնակցել են զինյալ ահաբեկիչներ:

Իտալական **24** տեղական ինքնակառավարման մարմիններ ճանաչել են Արցախի անկախությունը, դատապարտել Ադրբեջանի ագրեսիան և համերաշխություն հայտնել հայ ժողովրդին:

Փետրվարի 14-ից 16-ը Մյունխենի անվտանգության միջազգային համաժողովի շրջանակում կայացել է ՀՀ ԱԳ նախարար Զոհրաբ Մնացականյանի հանդիպումը **Մալթայի** արտաքին և եվրոպական գործերի նախարար Էվարիստ Բարտոլոյի հետ:

Հոկտեմբերի 9-ին Սան Մարինոյի արտաքին գործերի, միջազգային տնտեսական համագործակցության և հեռահաղորդակցությունների նախարարությունը հանդես է եկել հայտարարությամբ, որում կարևորել է ԵԱՀԿ ՄԽ գործունեությունը և կոչ է արել երկխոսության միջոցով փնտրել ԼՂ հիմնահարցի խաղաղ կարգավորում:

Մայիսի 8-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հեռախոսազրույց է ունեցել **Հռոմի Սրբազան Քահանայապետ** Ն.Ս. Ֆրանցիսկոս Պապի հետ:

Փետրվարի 14-ից 16-ը Մյունխենի անվտանգության համաժողովի շրջանակում ՀՀ վարչապետ Փաշինյանը հանդիպել է **Հունաստանի** վարչապետ Միցոտակիսին:

Փետրվարի 24-ին Ժնևում Մարդու իրավունքների խորհրդի 43-րդ նստաշրջանի շրջանակներում ՀՀ ԱԳ նախարար Մնացականյանը հանդիպել է Հունաստանի ԱԳ նախարար Դենդիասի հետ:

Փետրվարի 8-ին, ապրիլի 15-ին, օգոստոսի 15-ին, սեպտեմբերի 27-ին և հոկտեմբերի 1-ին կայացել են ՀՀ ԱԳ նախարար Զոհրաբ Մնացականյանի և Հունաստանի ԱԳ նախարար Նիկոս Դենդիասի հեռախոսազրույցները:

Սեպտեմբերի 27-ին Հունաստանի ԱԳՆ հանդես է եկել հայտարարությամբ, որով մտահոգություն է հայտնել լարվածության աճի կապակցությամբ և ԼՂ հակամարտության կողմերին զսպվածության կոչ է արվել:

Հոկտեմբերի 16-ին տեղի է ունեցել Հունաստանի ԱԳ նախարար Դենդիասի այցը Հայաստան: Դենդիասը հանդիպել է ՀՀ նախագահին, վարչապետին և ԱԳ նախարարին:

Հոկտեմբերի 10-ին Հունաստանի վարչապետը սատարել է ԵԱՀԿՄինսկի Խմբի համանախագահների՝ զինադադարի և խաղաղ գործընթացը վերսկսելու կոչերին՝ Թուրքիային մատնանշելով որպես տարածաշրջանում ապակայունացնող գործոն:

Հունվարի 22-ին, ապրիլի 15-ին, հուլիսի 15-ին ՀՀ ԱԳ նախարարը հեռախոսազրույց է ունեցել **Կիպրոսի** ԱԳ նախարարի հետ:

Փետրվարի 15-ին Մյունխենի անվտանգության համաժողովի շրջանակում ՀՀ ԱԳ նախարար Մնացականյանը հանդիպել է Կիպրոսի ԱԳ նախարար Խրիստոդուլիդեսին:

Հոկտեմբերի 9-ին Կիպրոսի Ներկայացուցիչների պալատը միաձայն ընդունել է սեպտեմբերի 27-ին Արցախի դեմ ագրեսիան դատապարտող բանաձև:

Դեկտեմբերի 28-ին ՀՀ ԱԳ նախարար Արա Այվազյանը հեռախոսազրույց է ունեցել Կիպրոսի ԱԳ նախարար Նիկոս Խրիստոդուլիդեսի հետ: Մտքեր են փոխանակվել տարածաշրջանային անվտանգության և կայունության հարցերի շուրջ:

Փետրվարի 14-ից 16-ը Մյունխենի անվտանգության համաժողովում ՀՀ վարչապետ Փաշինյանը հանդիպել է **Հյուսիսային Մակեդոնիայի** նախագահ Պենդարովսկիին:

Փետրվարի 15-ին Մյունխենի անվտանգության համաժողովի շրջանակում ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հանդիպել է **Բուլղարիայի** վարչապետ Բոյկո Բորիսովին:

Մարտի 9-ից 11-ը կայացել է ՀՀ ԱԺ նախագահ Արարատ Միրզոյանի պաշտոնական այցը **Սերբիա**:

Մայիսի 26-ին տեղի է ունեցել ՀՀ նախագահի հեռախոսազրույցը Սերբիայի Հանրապետության նախագահի հետ:

Հունիսի 16-ին և սեպտեմբերի 2-ին Հայաստանի ԱԳ նախարար Զոհրաբ Մնացականյանը հեռախոսազրույցներ է ունեցել Սերբիայի առաջին փոխվարչապետ, ԱԳ նախարար Իվիցա Դաչիչի հետ:

Հոկտեմբերի 12-ին ԵՄ ԱԳ նախարարների տեսակոնֆերանսին **Ռումինիայի** ԱԳ նախարարը իր մտահոգությունն է հայտնել ԼՂ հակամարտության էսկալացիայի վերաբերյալ, կոչ է արել պահպանել զինադադարը:

Հոկտեմբերի 11-ին Խորվաթիայի ԱԳՆ ողջունել է հրադադարի մասին համաձայնությունը և աջակցություն հայտնել ԵԱՀԿ ՄԽ համանախագահությանը:

Սեպտեմբերի 28-ին Չեռնոգորիայի ԱԳ նախարարի թվիթերյան էջում կատարված գրառմամբ մտահոգություն է հայտնվել ԼՂ-ում բռնության էսկալացիայի առնչությամբ, կոչ է արվել վերադառնալ բանակցությունների՝ ԵԱՀԿ ՄԽ համանախագահների հովանու ներքո:

Սեպտեմբերի 29-ին նույնաբովանդակ հայտարարությամբ է հանդես եկել Չեռնոգորիայի նախագահը:

Փետրվարի 15-ին Մյունխենի անվտանգության համաժողովի շրջանակներում ԱԳ նախարարը հանդիպել է **Չեխիայի** իր գործընկերոջը:

Հոկտեմբերի 7-ին ԱԳ նախարար Զոհրաբ Մնացականյանը հեռախոսազրույց է ունեցել Չեխիայի ԱԳ նախարար Տոմաշ Պետրժիչեկի հետ:

Հոկտեմբերի 8-ին Չեխիայի Խորհրդարանի Պատգամավորների պալատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովն ընդունել է ԼՂ վերաբերյալ բանաձև,

որում կողմերին կոչ է արվում կատարել քաղաքացիական բնակչության պաշտպանության վերաբերյալ միջազգային պարտավորությունները:

Հոկտեմբերի 13-ին Չեխիայի խորհրդարանի Սենատի Արտաքին հարաբերությունների, պաշտպանության և անվտանգության հանձնաժողովն ընդունել է ԼՂ հակամարտության վերաբերյալ բանաձև:

Մայիսի 7-ին կայացել է ԱԳ նախարար Զոհրաբ Մնացականյանի և **Լեհաստանի** ԱԳ նախարար Յացեկ Չապուտովիչի հեռախոսազրույցը:

Դեկտեմբերի 3-ին Լեհաստանի Սենատի արտաքին գործերի և Եվրամիության հանձնաժողովը միաձայն ընդունել է ԼՂ-ում իրավիճակի վերաբերյալ բանաձև, որով ողջունվել է զինադադարը, նշվել է, որ հակամարտության կարգավորմանը հնարավոր չէ հասնել առանց ԼՂ կարգավիճակի սահմանման:

Դեկտեմբերի 22-ին կայացել է ԱԳ նախարար Արա Այվազյանի և Լեհաստանի ԱԳ նախարար Զբիգնև Ռաուի հեռախոսազրույցը:

Փետրվարի 24-ին Երևանում բացվել է **Սլովակիայի** Հանրապետության դեսպանությունը: Ներկա էր Սլովակիայի արտաքին և եվրոպական գործերի նախարար Միրոսլավ Լայչակը:

Հոկտեմբերի 6-ին ՀՀ ԱԳ նախարարը հեռախոսազրույց է ունեցել Սլովակիայի արտաքին և եվրոպական գործերի նախարարի հետ:

Նոյեմբերի 4-ին Սլովակիայի Ազգային խորհուրդն ընդունել է բանաձև, որով խոր մտահոգություն է արտահայտում քաղաքացիական բնակավայրերի ռմբակոծման կապակցությամբ, դատապարտում է զինված գործողությունները և բռնությունները Լեռնային Ղարաբաղում և տարածաշրջանի հարակից տարածքներում, հորդորում է հակամարտության բոլոր կողմերին դադարեցնել կրակը և հակամարտության շարունակմանը նպաստող բոլոր գործողությունները, աջակցում է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներին՝ բանակցությունների միջոցով հասնելու խնդրի քաղաքական կարգավորմանը, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության հիմնական սկզբունքները հարգելու անհրաժեշտության կոչ է անում, որոնք ներառում են՝ տարածքային ամբողջականության, ազգերի ինքնորոշման իրավունքի և ուժի կիրառումից զերծ մնալու պարտավորության սկզբունքները:

10. Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի երկրներ

Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի երկրների հետ համագործակցության վրա բացասաբար են անդրադարձել կորոնավիրուսային համավարակով պայմանավորված սահմանափակումները: 2020թ. հետաձգվել են մի շարք միջոցառումներ և փոխայցելություններ (հայ-հնդկական համատեղ միջկառավարական հանձնաժողովի նիստ, հայ-վիետնամական միջկառավարական

համատեղ հանձնաժողովի նիստ, Սինգապուրում Հայաստանի մշակութային օրերի անցկացում, միջգերատեսչական խորհրդատվությունների անցկացում և այլն):

Հունվարի 12-ին ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանն ԱՄԷ կատարած աշխատանքային այցի շրջանակներում հանդիպում է ունեցել **Ինդոնեզիայի** նախագահ Ջոկո Վիդոդոյի հետ:

Հունվարի 19-ին ուժի մեջ է մտել «ՀՀ կառավարության և **ՉԺՀ** կառավարության միջև սովորական անձնագրեր կրող անձանց համար մուտքի արտոնագրի պահանջի փոխադարձության սկզբունքով վերացման մասին» համաձայնագիրը: Covid-19-ի համավարակի բռնկման պայմաններում, չինական կողմի հետ համակարգվել է համաձայնագրի ժամանակավոր կասեցումը մինչև **մայիսի 31-ը: Հունիսի 1-ից** համաձայնագիրը կրկին ուժի մեջ է մտել:

Ապրիլի 8-ին, 15-ին, մայիսի 14-ին, հունիսի 20-ին և դեկտեմբերի 19-ին Պեկինից հատուկ չվերթներով Հայաստան են բերվել «Covid-19»-ի դեմ պայքարի համար անհրաժեշտ առողջապահական պարագաներ, որոնք ձեռք էին բերվել ՀՀ պետական միջոցների հաշվին, ինչպես նաև նվիրաբերվել էին ՉԺՀ կառավարական շրջանակների, ՄԱԿ Պարենի համաշխարհային ծրագրի (WFP), տարբեր բարեգործական հիմնադրամների, հայազգի և օտարազգի անհատների կողմից: Նշված չվերթների իրականացմամբ միայն ՉԺՀ կողմից Հայաստանին նվիրաբերված բժշկական պարագաների ընդհանուր արժեքը կազմել է ավելի քան 1 մլն. ԱՄՆ դոլար:

2020թ. ստորագրվել է ՀՀ կառավարության և **Ճապոնիայի** կառավարության միջև «Տնտեսական և սոցիալական զարգացում (բժշկական սարքավորումների տրամադրում)» դրամաշնորհային համաձայնագիրը, որի համաձայն Ճապոնիայի կառավարությունը 2021թ. Հայաստանին կտրամադրի 400 մլն. ճապոնական յեն (մոտ 3.7 մլն. ԱՄՆ դոլար) արժողությամբ բժշկական սարքավորումներ և ռեանիմոբիլներ:

Ճապոնիայի հակահամաճարակային գործակալությունը Հայաստանին է նվիրաբերել 1,000 հատ թեստ և 100 հիվանդի բուժման «Avigan» դեղամիջոց:

Հնդկաստանը Հայաստանին տրամադրել է Հիդրոքսիքլորիքին դեղամիջոցի խմբաքանակ՝ նախատեսված շուրջ 5,000 հիվանդի բուժման համար:

Սեպտեմբերի 27-ին Արցախի դեմ ադրբեջանական հարձակման առաջին օրվանից ջանքեր են գործադրվել Ասիական-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի երկրների պատկան մարմիններին և գերատեսչություններին իրազեկելու պատերազմի ընթացքի և զարգացումների վերաբերյալ, ներկայացվել են ՀՀ դիրքորոշումները:

Աֆղանստանի ԱԳՆ ադրբեջանամետ հայտարարությունից հետո քայլեր են ձեռնարկվել Աֆղանստանին ՀԱՊԿ խորհրդարանական ասամբլեայում դիտորդի կագավիճակից զրկելու ուղղությամբ: ՀՀ ԱԺ նախագահի կողմից համապատասխան նամակ է ուղղվել ՀԱՊԿ խորհրդարանական ասամբլեա:

11. Միջին Արևելքի և Աֆրիկայի երկրներ

2020թ. աշխատանքներ են իրականացվել Միջին Արևելքի և Աֆրիկայի երկրների հետ ավանդական բարեկամական և գործընկերային հարաբերությունները զարգացնելու ու խորացնելու, տարածաշրջանում ՀՀ ներկայությունն ու ներգրավվածությունն ընդլայնելու ուղղությամբ: **Հունվարից** սկսել է գործել **Եթովպիայում** ՀՀ դեսպանությունը, **փետրվարից՝ Իսրայելում** ՀՀ դեսպանությունը, իսկ **նոյեմբերից՝ Էրբիլում** ՀՀ գլխավոր հյուպատոսությունը:

Նոյեմբերի 19-ին բացվել է ՀՀ-ում Սենեգալի Հանրապետության պատվավոր հյուպատոսի գրասենյակը:

Միաժամանակ, կորոնավիրուսի համավարակով պայմանավորված, ինչպես նաև արցախյան պատերազմի պատճառով տարածաշրջանի երկրների հետ առկա տարբեր համատեղ ծրագրերի և նախագծերի իրականացումը հետաձգվել է:

Հունվարի 12-ից 17-ը կայացել է ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանի աշխատանքային այցն **Արաբական Միացյալ Էմիրություններ**, որի ընթացքում ՀՀ նախագահը հանդիպել է Աբու Դաբիի թագաժառանգ, ԱՄԷ զինված ուժերի գլխավոր հրամանատարի տեղակալ շեյխ Մուհամմադ բին Զայեդ Ալ-Նահյանի հետ և որպես գլխավոր բանախոս մասնակցել «Աբու Դաբիի կայունության շաբաթ» ֆորումին:

Հունվարի 12-ին ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանը՝ ԱՄԷ կատարած աշխատանքային այցի շրջանակներում, հանդիպում է ունեցել **Ռուանդայի** նախագահ Փոլ Կագամեի հետ:

Նոյեմբերի 15-ին կայացել է ՀՀ նախագահի աշխատանքային այցն Արաբական Միացյալ Էմիրություններ: Աբու Դաբիում նախագահը հանդիպում է ունեցել Աբու Դաբիի թագաժառանգ, ԱՄԷ զինված ուժերի գլխավոր հրամանատարի տեղակալ շեյխ Մոհամմեդ բին Զայեդ Ալ-Նահյանի հետ:

Հունվարի 21-ից 24-ը անցկացված Դավոսի համաշխարհային տնտեսական համաժողովի շրջանակներում ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանը հանդիպել է **Կատարի** ներդրումային հիմնադրամի գործադիր տնօրեն Մանսուր բին Իբրահիմ Ալ-Մահմուդի հետ:

Հունվարի 22-ից 26-ը կայացել է ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանի աշխատանքային այցն **Իսրայելի Պետություն**՝ Իսրայելի նախագահի հրավերով մասնակցելու Հոլոքոստի զոհերի հիշատակին նվիրված միջազգային 5-րդ համաժողովին:

Հոկտեմբերի 5-ին ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանը հեռախոսազրույց է ունեցել Իսրայելի նախագահ Ռեուվեն Ռիվլինի հետ: Նախագահ Սարգսյանը ներկայացրել է Արցախում ու Հայաստանի սահմաններին Ադրբեջանի սանձազերծած ռազմական

ագրեսիայի հետևանքով ստեղծված իրադրությունը: Անդրադարձ է կատարվել երկկողմ հարաբերություններին առնչվող մի շարք հարցերի:

Հունվարի 21-ից 24-ը անցկացված Դավոսի համաշխարհային տնտեսական համաժողովի շրջանակներում ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանը հանդիպել է **Իրաքյան** Քուրդիստանի նախագահ Նեչիրվան Բարզանիի հետ:

Փետրվարի 14-ից 16-ը կայացած Մյունխենի անվտանգության համաժողովի շրջանակներում ԱԳ նախարար Զոհրաբ Մնացականյանը հանդիպում է ունեցել Իրաքի ԱԳ նախարար Մուհամմադ Ալի Ալ-Հաքիմի հետ:

Փետրվարի 10-ից 11-ը Հայաստան է այցելել **Հորդանանի** թագավոր Աբդալլահ Երկրորդը, ով հանդիպումներ է ունեցել ՀՀ նախագահի և վարչապետի հետ: Այցի շրջանակներում տեղի է ունեցել հայ-հորդանանյան գործարար համաժողով, որի ընթացքում ստորագրվել են մի շարք փաստաթղթեր: **Նոյեմբերի 23-24-ը** տեղի է ունեցել ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանի աշխատանքային այցը Հորդանան:

Հունվարի 25-ին ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանը Ռամալլայում հանդիպել է **Պաղեստինի** Ազգային իշխանության նախագահ Մահմուդ Աբբասի հետ: **Փետրվարի 26-ին** ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի 43-րդ նստաշրջանի շրջանակներում ՀՀ ԱԳ նախարար Զոհրաբ Մնացականյանը ժնևում հանդիպել է Պաղեստինի ԱԳ նախարար Ռիյադ Ալ-Մալիքիի հետ:

Փետրվարի 14-ից 16-ը կայացած Մյունխենի անվտանգության համաժողովի շրջանակներում ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հանդիպել է **Լիբանանի** փոխվարչապետ, պաշտպանության նախարար Զեյնա Աքարի հետ: **Օգոստոսի 5-ին** ՀՀ վարչապետը հեռախոսազրույց է ունեցել Լիբանանի նախագահ Միշել Աունի հետ՝ օգոստոսի 4-ին Բեյրութի նավահանգստում տեղի ունեցած պայթյունի հետևանքները հաղթահարելու նպատակով Լիբանանին օգնություն ցուցաբերելու վերաբերյալ: Արդյունքում, Հայաստանից Լիբանան է առաքվել 3 օդանավ հումանիտար օգնություն՝ հիմնականում դեղորայք, բժշկական պարագաներ և պարենամթերք:

Սեպտեմբերի 12-ից 14-ը կայացել է ՀՀ ԱԳ նախարարի այցը **Եգիպտոս**: Հանդիպումներ են կայացել ԵԱՀ նախագահի, ԱԳ նախարարի, Ալ Ազհարի գերագույն իմամի, Ղպտի Առաքելական եկեղեցու առաջնորդի և եգիպտահայ համայնքի ներկայացուցիչների հետ, հարցազրույցներ են տրվել եգիպտական լրատվամիջոցներին:

Օգոստոս-սեպտեմբեր ամիսներին ՀՀ կառավարությունը 100,000 ԱՄՆ դոլար մարդասիրական օգնություն է տրամադրել **Սիրիայի** հայ համայքնին: Օգնությունը բաշխվել է Դամասկոսի, Հալեպի, Կամիշլիի, Հասակեի, Հոմսի, Դերիքի հայ համայքներին (ընդհանուր թվով 5000 ընտանիքների):

2020թ. սեպտեմբերի 27-ին Արցախի դեմ սանձազերծված ռազմական ագրեսիայի հետևանքով ստեղծված իրավիճակում ՀՀ դիվանագիտական ծառայության

մարմինների հետ համագործակցաբար երկկողմ և բազմակողմ հանդիպումների, տարածաշրջանային և արաբալեզու մամուլի հետ տարվող գործակցության (հարցազրույցներ, հոդվածներ հրապարակումներ) միջոցով իրականացվել են մերձավորարևելյան տարածաշրջանում խնդրո առարկայի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության տարածման, ՀՀ պաշտոնական դիրքորոշումների ներկայացմանն ու գործընկեր երկրների քաղաքական աջակցության ապահովմանն ուղղված համապարփակ աշխատանքներ:

12. Հյուսիսային և Հարավային Ամերիկայի երկրներ

Հունիսի 12-ին տեղի է ունեցել ՀՀ ԱԳ նախարար Զոհրաբ Մնացականյանի և **Կանադայի** ԱԳ նախարար Ֆրանսուա-Ֆիլիպ Շամպայնի հեռախոսազրույցը երկկողմ և բազմակողմ հարթակներում համագործակցությանն առնչվող հարցերի վերաբերյալ:

Նոյեմբերի 17-ին ՀՀ-ում Կանադայի նորանշանակ դեսպան Էլիսոն Լըքլերը (նստավայրը՝ Մոսկվա) իր հավատարմագրերն է հանձնել ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանին:

2020թ. հունվարին աշխատանքային այցով Իսրայելում գտնվող ՀՀ նախագահ Ա. Սարգսյանը հանդիպել է Կանադայի գեներալ-նահանգապետ Ժուլի Պայետի հետ:

Հոկտեմբերի 16-ին վարչապետ Նիկոլ Փաշինյանը հեռախոսազրույց է ունեցել Կանադայի վարչապետ Ջաստին Թրյուդոյի հետ, որի ընթացքում քննարկվել են ղարաբաղյան հակամարտության վերջին զարգացումները և տարածաշրջանում տիրող անվտանգային ընդհանուր իրավիճակը:

Հոկտեմբերի 18-ին կայացած հեռախոսազրույցի ընթացքում ՀՀ ԱԳ նախարարը Կանադայի ԱԳ նախարար Ֆրանսուա-Ֆիլիպ Շամպայնին հանգամանալից ներկայացրել է Արցախի և Ադրբեջանի շփման գծում տիրող իրավիճակը, Ադրբեջանի կողմից իրականացված պատերազմական հանցագործությունները, ինչպես նաև Ադրբեջանի կողմից **հոկտեմբերի 10-ին և 17-ին** հրադադար հաստատելու նպատակով ձեռք բերված պայմանավորվածությունները խախտելու վերաբերյալ տեղեկատվությունը:

Մայիսի 22-ին և հոկտեմբերի 15-ին ՀՀ ԱԳ նախարարը հեռախոսազրույցներ է ունեցել **Արգենտինայի Հանրապետության** ԱԳ նախարարի հետ: ՀՀ ԱԳ նախարարը զրուցակցին հանգամանալից ներկայացրել է ԼՂ հակամարտության վերջին զարգացումները և Արցախում ընթացող ռազմական գործողությունների մանրամասները:

Հուլիսի 18-ին տեղի է ունեցել ՀՀ ԱԳ նախարարի հեռախոսազրույցը **Կուբայի Հանրապետության** ԱԳ նախարարի հետ: Նախարարներն անդրադարձել են երկու երկրներում տիրող իրավիճակին՝ կապված կորոնավիրուսային համավարակի հետ:

Հունվարի 20-ից 21-ը տեղի է ունեցել **Մեքսիկայի** Կոնգրեսի Պատգամավորների պալատի՝ Հայաստանի հետ բարեկամության պատգամավորական խմբի նախագահ Ադոլֆո Տոռես Ռամիրեսի այցը Հայաստան:

Հոկտեմբերի 13-ին տեղի է ունեցել հեռավար հանդիպում Հայաստանի էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ավագ Ավանեսյանի և **Չիլիի Հանրապետության** ԱԳ նախարարի միջազգային տնտեսական հարցերով տեղակալ Ռոդրիգո Յանյես Բենիտեսի միջև, որի ընթացքում քննարկվել են առևտրատնտեսական բնագավառում երկկողմ հարաբերությունների զարգացման հեռանկարները:

Հոկտեմբերի 30-ին տեղի է ունեցել Հայաստանի ԱԳ նախարար Մնացականյանի և **Ուրուգվայի Արևելյան Հանրապետության** ԱԳ նախարար Բուստիժոյի հեռախոսազրույցը:

13. Միջազգային բազմակողմ համագործակցություն

13.1 Միավորված ազգերի կազմակերպություն

Հաշվետու տարվա ընթացքում առաջ են մղվել զարգացման օրակարգից բխող ՀՀ հանձնառությունների կատարումը, շարունակվել է **2030 օրակարգի կայուն զարգացման նպատակների (ԿԶՆ)** իրականացմանն ուղղված ազգային գործընթացների համակարգումը, լրամշակվել են Հայաստան-ՄԱԿ համագործակցության շրջանակն ընդգրկող մի շարք փաստաթղթեր, համակարգվել է ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի և ՀՀ համապատասխան գերատեսչությունների միջև կապը՝ «COVID-19» համավարակի տարածման և դրա սոցիալ-տնտեսական հետևանքների մեղմացման ուղղությամբ:

Ապրիլի 21-ին ՀՀ-ն ընտրվել է ՄԱԿ-ի Հանցավորության կանխարգելման և քրեական արդարադատության հանձնաժողովի անդամ:

Հաշվետու ժամանակաշրջանում ԱԳՆ-ն համակարգել և ձևավորել է դիրքորոշումներ ՄԱԿ-ի կոմիտեներում քննարկվող և Գլխավոր ասամբլեայում ընդունվող բանաձևերի վերաբերյալ: Համակարգվել է նաև տարբեր կառույցներում ընտրությունների և փոխադարձ աջակցությունների գործընթացը:

Մարտի 5-ին Հայաստանում ԿԶՆ-ների իրականացմանը, ինչպես նաև «ՄԱԿ-ի ԿԶՆ-ների իրականացման Ազգային կամավոր գնահատման» երկրորդ զեկույցի մշակման գործընթացին նոր թափ հաղորդելու նպատակով ՀՀ ԱԳ նախարարն ընդունել է ՀՀ-ում ՄԱԿ-ի մշտական համակարգողին և ՄԱԿ-ի մասնագիտացված գործակալությունների ղեկավարներին:

Հուլիսի 10-ին ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական խորհրդի հովանու ներքո առցանց ձևաչափով անցկացվող բարձր մակարդակի քաղաքական ֆորումի

ընթացքում Հայաստանը ներկայացրել է ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակների իրականացման Ազգային կամավոր գնահատման երկրորդ զեկույցը:

Համավարակի բռնկումից ի վեր ՀՀ-ն ակտիվորեն ներգրավվել է միջազգային մի շարք կառույցների կողմից իրականացվող գործընթացներում և նախաձեռնություններում, միացել է միջազգային նախաձեռնությունների, փաստաթղթերի, հայտարարությունների, համահեղինակել է համապատասխան բանաձևեր:

Սեպտեմբերի երկրորդ կեսին մեկնարկել է ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 75-րդ նստաշրջանի բարձրաստիճան հատվածը՝ առցանց ձևաչափով:

Բարձրաստիճան շաբաթվա ընթացքում ՀՀ վարչապետը հանդես է եկել երկու ելույթով՝ **սեպտեմբերի 22-ին** կայացած ՄԱԿ-ի 75 ամյակին նվիրված միջոցառմանը և **սեպտեմբերի 25-ին** ԳԱ հիմնական քննարկումներին: ՀՀ ԱԳ նախարարը նույնպես մասնակցել է մի շարք միջոցառումների և հանդես եկել ելույթներով:

ՀՀ ԱԳՆ և այլ շահագրգիռ ոլորտային գերատեսչությունների կողմից լրամշակվել են Հայաստանում ՄԱԿ-ի զարգացման աջակցության 2016-2020թթ. ծրագրի ավարտական գնահատման, ինչպես նաև նույն ժամանակահատվածի համար ՄԱԶԾ և ՄԱԲՀ երկրի ծրագրային փաստաթղթերը: Համաձայնեցման փուլում է **«2021-2025թթ. համար Հայաստան-ՄԱԿ կայուն զարգացման համագործացության շրջանակ»** փաստաթուղթը: Սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից սանձազերծած ագրեսիայից հետո վերոնշյալ, ինչպես նաև **ՄԱԶԾ և ՄԱԲՀ** երկրի ծրագրային փաստաթղթերում կատարվել են մի շարք լրացումներ, որպեսզի վերջիններս արտացոլեն Հայաստանում պատերազմից հետո առաջացած նոր իրողությունները:

ՄԱԶԾ-ի աշխատանքները ՀՀ-ում ներառում են 4 հիմնական ուղղություններ՝ **աղքատության նվազում, ժողովրդավարական կառավարում, շրջակա միջավայր և էներգետիկա, գենդերային հարցեր և կանանց դերի հզորացում:**

ՄԱԶԾ-ը նաև շարունակում է ծրագրերի իրականացումը ՀՀ-ում՝ կենտրոնանալով էներգախնայողության ոլորտի զարգացման և այս ոլորտում երկարաժամկետ արդյունքների ապահովման վրա

ԱԳՆ-ն ապահովել է ՄԱԿ-ի թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակի կողմից կազմվելիք համապատասխան տեղեկատուներում և զեկույցներում ՀՀ կողմից տվյալների մեկտեղումը և ներկայացումը: Նաև ակտիվորեն ներգրավված է եղել դեկտեմբերի 10-ից 18-ը կայացած ՄԱԿ-ի հանցավորության կանխարգելման և քրեական արդարադատության 14-րդ կոնգրեսի քաղաքական Հռչակագրի նախագծի շուրջ կազմակերպված քննարկումներին:

Սեպտեմբերին ՀՀ-ն ընտրվել է ՄԱԿ-ի ծրագրման և համակարգման կոմիտեի անդամ՝ 2021-2023 թթ. ժամանակահատվածի համար:

ՀՀ-ի կողմից ներկայացված թեկնածուն դեկտեմբերի 4-ին կայացած ընտրություններում ընտրվել է Եվրոպայի խորհրդի **Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի հարցերով փորձագետների խմբի** անդամ՝ 4 տարի ժամկետով:

2019-2021թթ. ժամանակաշրջանում հանդիսանալով ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական խորհրդի անդամ՝ Հայաստանը մասնակցել է խորհրդի 25 օժանդակ մարմինների ընտրություններին:

Հաշվետու տարում ԱԳՆ-ն լիովին կատարել է ՀՀ պետական բյուջեով Միջազգային կազմակերպություններին ՀՀ անդամակցության գծով հատկացված գումարների ֆինանսական փոխանցումները: Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2020թ. ՀՀ-ն ներառվել է ՄԱԿ-ի պատվո ցանկում՝ կազմակերպության կանոնավոր բյուջեին ժամանակին և ամբողջությամբ կատարված անդամավճարների համար:

13.2. Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն

ՀՀ և ԵԱՀԿ քարտուղարության միջև մշակված արտաբյուջետային ծրագրերի իրականացման ուղղությամբ արձանագրվել են հետևյալ զարգացումները՝

- Անվտանգության ոլորտի կառավարում և ժողովրդավարական վերահսկողություն ծրագրի շրջանակներում անվտանգության ոլորտի կառավարման և բարեփոխումների հարցերով ՀՀ միջգերատեսչական հարթակի կողմից մշակվել են անվտանգության ոլորտին առնչվող սահմանադրական փոփոխությունների առաջարկներ, ՀՀ Պաշտպանության մասին օրենքում լրացումների նախագիծ:

- Համաձայնություն է կայացվել Ոստիկանության բարեփոխումների գործընթացին աջակցության երկամյա ծրագրի շուրջ, որն իրականացվելու է ԵԱՀԿ ու ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի կողմից ԵՄ ֆինանսավորմամբ: Ծրագրի մեկնարկը նախատեսվում է 2021թ.:

- ԵԱՀԿ տնտեսական ու բնապահպանական գործողությունների համակարգողի գրասենյակի և Համագործակցության ու զարգացման շվեյցարական գործակալության միջև ստորագրվել է համաձայնագիր՝ հաջակցություն կոռուպցիայի դեմ պայքարի:

ԵԱՀԿ ՄԽ-ում հայկական կողմի հայտարարությունները վերաբերել են ԼՂ հիմնահարցին, ԵԱՀԿ Քարտուղարության և հաստատությունների ու գործընկեր միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությանը: Ադրբեջանի կողմից Արցախի դեմ սանձազերծված պատերազմի առաջին օրվանից ՄԽ հանդիպման «Ընթացիկ հարցեր» կետի ներքո բարձրացվել է Արցախի և Հայաստանի դեմ Ադրբեջանի՝ Թուրքիայի և օտարերկրյա զինյալ ահաբեկիչների ուղղակի ներգրավվածությամբ ագրեսիան խորագրով հարցը:

Հուլիսի 29-ին ԵԱՀԿ-ում ՀՀ մշտական առաքելությունը շրջանառել է հայտագիր՝ ԵԱՀԿ մասնակից պետություններին և ԵՍԶՈՒ պայմանագրի անդամ երկրներին

տեղեկացնելով, որ Հայաստանի Հանրապետությունն այսուհետ կասեցնում է ԵՍՀՈՒ պայմանագրի և Վիեննայի փաստաթղթի շրջանակներում Թուրքիայի Հանրապետության տեսչությունները կամ բազմազգ տեսչական խմբերի կազմում հրավիրյալի կարգավիճակով թուրք տեսուչների մասնակցությունը ՀՀ տարածքում անցկացվելիք տեսչական այցերին:

Փետրվարի 17-ից 18-ը Վիեննայում, իսկ **հունիսի 15-ից 16-ը** առցանց ձևաչափով տեղի են ունեցել ԵԱՀԿ տնտեսական և բնապահպանական ֆորումի համապատասխանաբար առաջին և երկրորդ նախապատրաստական հանդիպումները: Հայկական կողմը բարձրաձայնել է ՀՀ մոտեցումը ԵԱՀԿ տարածաշրջանում թվայնացման միջոցով կոռուպցիայի դեմ պայքարի վերաբերյալ:

13.3 Եվրոպայի խորհուրդ

Փետրվարի 15-ին Մյունխենի անվտանգության համաժողովի շրջանակներում տեղի է ունեցել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հանդիպումը ԵԽ ԳՔ Մարիա Պեյչինովիչ Բուրիչի հետ:

Փետրվարի 25-ին Ժնևում, ՄԱԿ Մարդու իրավունքների խորհրդի 43-րդ նիստի շրջանակներում, ՀՀ ԱԳ նախարար Զոհրաբ Մնացականյանը հանդիպում է ունեցել ԵԽ գլխավոր քարտուղար Մարիա Պեյչինովիչ Բուրիչի հետ:

Հունիսի 15-ին ՀՀ ԱԳ նախարար Զոհրաբ Մնացականյանը հեռախոսազրույց է ունեցել ԵԽ ԳՔ Մարիա Պեյչինովիչ Բուրիչի հետ: Անդրադարձել են COVID-19-ով պայմանավորված իրավիճակին, ՀՀ-ում տնտեսական իրավիճակին, բարեփոխումների գործընթացին, կոռուպցիայի կանխարգելմանը, սահմանադրական բարեփոխումներին, ԼՂ հակամարտության կարգավորմանը:

Ընթացքի մեջ է ՀՀ-ԵԽ Գործողությունների ծրագիրը (2019-2022թթ.), որով նախատեսված են բարեփոխման ծրագրեր արդարադատության, հակակոռուպցիոն, զինված ուժերում մարդու իրավունքների, սոցիալական, ոստիկանության բարեփոխումների, կանանց և երեխաների իրավունքների, տեղական ժողովրդավարության և մի շարք այլ ոլորտներում:

Հունիսին ԵԽ Միջազգային հասարակական կազմակերպությունների կոնֆերանսը զեկույց է ընդունել Հայաստանի վերաբերյալ «Քաղաքացիական մասնակցությունը որոշումների կայացման գործընթացում» խորագրով:

Հունիսի 15-ին Հայաստանը ԵԽ է ներկայացրել Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիայով նախատեսված 5-րդ պարբերական զեկույցը:

Հոկտեմբերի 28-ին ԵԽ տեղական և շրջանային իշխանությունների կոնգրեսն ընդունել է զեկույց՝ Հայաստանի կողմից «Տեղական ինքնակառավարման մասին

եվրոպական խարտիայի» դրույթների կատարման վերաբերյալ: Տրվել են առաջարկություններ տեղական ժողովրդավարության ամրապնդման ուղղությամբ:

Դեկտեմբերի 8-ին ԵԽ նախարարների կոմիտեն ընդունել է Հայաստանի վերաբերյալ զեկույց և բանաձև՝ ԵԽ Փոքրամասնությունների և շրջանային լեզուների պաշտպանության եվրոպական Խարտիայի շրջանակներում:

ԵԽ ԳՔ Մարիյա Պեյչինովիչ Բուրիչը սեպտեմբերի 27-ին հանդես է եկել զինված հակամարտությունը դադարեցնելու կոչով, իսկ հոկտեմբերի 1-ին՝ ՄԻԵԴ որոշումն ի կատար ածելու հորդորով:

Հոկտեմբերի 1-ին հայտարարությամբ է հանդես եկել ԵԽ Մարդու իրավունքների հանձնակատար Դունյա Միյատովիչը:

Նոյեմբերի 4-ին կայացած ԵԽ նախարարների կոմիտեի 130-րդ նստաշրջանում ՀՀ ԱԳ նախարարի ելույթը նվիրված է եղել ԼՂ-ին և Ադրբեջանի սանձնազերծած ագրեսիայի հետևանքով ԼՂ-ում ստեղծված իրավիճակին:

Նոյեմբերի 25-ին ՀՀ են այցելել ԳՔ բանագնացներ՝ ԵԽ մարդու իրավունքների ու իրավունքի գերակայության հարցերով գլխավոր տնօրեն Խրիստոս Յակումոպուլոսը և ԵԽ քաղաքական տնօրեն Ալեքսանդր Գեսելը՝ ԵԽ գլխավոր քարտուղարի և Մարդու իրավունքների հանձնակատարի այցերը նախապատրաստելու համար:

Հոկտեմբերի 9-ին ԵԽԽՎ մոնիտորինգի հանձնաժողովում քննարկվել է «Հայաստանի և Ադրբեջանի միջև ռազմական բախումները» հարցը:

Հոկտեմբերի 12-ին ԵԽԽՎ Ընդլայնված մշտական կոմիտեի նիստի ընթացքում տեղի է ունեցել «Զինված հակամարտությունը Հայաստանի և Ադրբեջանի միջև, հակամարտության խաղաղ կարգավորման ձախողումը և տարածաշրջանային կայունության ռիսկերը» թեմայով քննարկում:

Նոյեմբերի 19-ին ԵԽԽՎ բյուրոն որոշել է հանձնարարել Միգրացիայի, փախստականների և տեղահանված անձանց կոմիտեին պատրաստել զեկույց «Հայաստանի և Ադրբեջանի միջև հակամարտության հումանիտար հետևանքները» թեմայով: Դեկտեմբերի 2-ին զեկուցող է նշանակվել իռլանդացի Պոլ Գավանը:

Սեպտեմբերի 30-ին ՄԻԵԴ-ը Հայաստանի դիմումի հիման վրա որոշում է կայացրել միջանկյալ միջոց կիրառել Ադրբեջանի նկատմամբ:

Հոկտեմբերի 6-ին ՄԻԵԴ-ը ՀՀ դիմումի հիման վրա որոշել է միջանկյալ միջոց կիրառել Թուրքիայի նկատմամբ:

Նոյեմբերի 16-ին ՄԻԵԴ է ներկայացվել Ադրբեջանի նկատմամբ միջանկյալ միջոց կիրառելու դիմում, որով պահանջվել է քայլեր ձեռնարկել ապահովելու նոյեմբերի 11-ին Գորիս-Շուշի ճանապարհահատվածում անհայտ կորած 10 քաղաքացիների կյանքի իրավունքը և զերծ մնալ նրանց նկատմամբ անմարդկային վերաբերմունքից:

Նոյեմբերի 20-ին ՄԻԵԴ-ը բավարարել է թվով 9 ռազմագերիների մասով Ադրբեջանի հանդեպ միջանկյալ միջոց կիրառելու մասին ՀՀ դիմումը:

Դեկտեմբերի 17-ին ՄԻԵԴ-ը մերժել է իր նկատմամբ միջանկյալ միջոցի վերացման մասին Ադրբեջանի կառավարության պահանջը:

13.4 Անկախ պետությունների համագործակցություն (ԱՊՀ)

Մայիսի 29-ին և նոյեմբերի 6-ին՝ ՀՀ փոխվարչապետ Միհեր Գրիգորյանի մասնակցությամբ, կայացել են ԱՊՀ Կառավարությունների ղեկավարների խորհրդի նիստերը՝ տեսակապի ձևաչափով:

Հաշվետու շրջանում կայացել է ԱՊՀ տնտեսական խորհրդի 4 նիստ:

Մայիսի 12-ին ՀՀ ԱԳ նախարար Զ. Մնացականյանի և **դեկտեմբերի 10-ին**՝ ԱԳ նախարարի տեղակալ Ա. Ղևոնդյանի մասնակցությամբ կայացել են ԱՊՀ ԱԳ նախարարների խորհրդի նիստերը: Ներկայացվել է Կոռուպցիայի հակազդման ոլորտում ԱՊՀ մասնակից պետությունների համագործակցության համաձայնագիրը:

Դեկտեմբերի 18-ին կայացած ԱՊՀ պետությունների ղեկավարների խորհրդի նիստին ընդունվել են Միջազգային տեղեկատվական անվտանգության ապահովման ոլորտում համագործակցության մասին հայտարարություն և մինչև 2025թ. ԱՊՀ մասնակից պետությունների ռազմական համագործակցության մասին հայեցակարգը:

13.5 Եվրասիական տնտեսական միություն

Եվրասիական տնտեսական միության շրջանակներում 2020թ. կայացել են տարբեր մակարդակի նիստեր, այդ թվում՝ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի՝ 3, Եվրասիական միջկառավարական խորհրդի՝ 6, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 15 նիստ, իսկ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի նիստերը տեղի են ունեցել շաբաթական մեկ անգամ: Ընդունված որոշումների նպատակն է կարգավորել եվրասիական տնտեսական ինտեգրացիայի զարգացման առանցքային խնդիրները:

ՀՀ վարչապետը մասնակցել է Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի և Եվրասիական միջկառավարական խորհրդի բոլոր նիստերին:

Ապրիլի 14-ին տեսակապի ձևաչափով կայացած ԵԱՏԲԽ նիստին ԵԱՏՄ անդամ պետությունների առաջնորդները քննարկել են Միության տարածքում կորոնավիրուսի տարածումը կանխարգելման ուղղությամբ իրականացվող միջոցառումները, ստեղծված իրավիճակում տնտեսական զարգացումներն ու առկա խնդիրների կարգավորման ուղղությամբ համատեղ քայլերը, ընդունվել է «COVID-19» համավարակի հետ կապված համատեղ հայտարարություն:

Մայիսի 19-ին տեսակապի ձևաչափով կայացած ԵԱՏԲԽ նիստին ԵԱՏՄ երկրների ղեկավարների կողմից մանրամասն քննարկվել է «Մինչև 2025թ. եվրասիական

ինտեգրման զարգացման ռազմավարական ուղղությունների» մասին փաստաթուղթը, որն ընդհանուր առմամբ արժանացել է հավանության:

Դեկտեմբերի 11-ի ԵԱՏԲԽ նիստին, ի թիվս այլ հարցերի, առանցքային քննարկման հարց է հանդիսացել ԵԱՏՄ ընդհանուր գազի շուկայի ձևավորման խնդիրը:

Հունվարի 31-ին Ալմաթիում կայացած Եվրասիական միջկառավարական խորհրդի նիստում անդրադարձ է կատարվել ԵԱՏՄ շուկայում խոչընդոտների վերացմանը, ազգային տեղեկատվական համակարգերի ինտեգրմանը, մաքսային կարգավորումների ոլորտում համագործակցությանը և ընդհանուր շուկաների ձևավորմանը:

Ապրիլի 10-ին և 23-ին տեսակապի ձևաչափով Եվրասիական միջկառավարական խորհրդի նիստեր են տեղի ունեցել, որտեղ քննարկվել են եվրասիական ինտեգրման զարգացման ռազմավարական խնդիրներին առնչվող հարցեր:

Հուլիսի 17-ին Եվրասիական միջկառավարական խորհրդի՝ Մինսկում անցկացված նիստում քննարկվել են Միության ներքին շուկայում արգելքների վերացման, ապրանքների մակնշման, տեղափոխման, արդյունաբերականացման և ագրոարդյունաբերության քարտեզների մշակման և այլ արդիական հարցեր:

Հոկտեմբերի 9-ին Երևանում կայացած Եվրասիական միջկառավարական խորհրդի նիստին քննարկվել են ԵԱՏՄ-ի ներքին շուկայում 2018-2019 թթ. բացառումների և սահմանափակումների վերացման «ճանապարհային քարտեզի» միջոցառումների պլանի իրագործման ընթացքը, արտահանման զարգացմանն ուղղված համատեղ միջոցները, ԵԱՏՄ-ում ապրանքների անդրսահմանային (արտաքին) էլեկտրոնային առևտրի կարգավորման հիմնական ուղղությունները, ագրոարդյունաբերական համալիրի զարգացման համատեղ կանխատեսումները, ինչպես նաև ԵԱՏՄ անդամ պետությունների 2020-2021 թթ. գյուղատնտեսական արտադրանքին առնչվող հարցեր: Վարչապետ Փաշինյանն անդրադարձել է ԵԱՏՄ անդամ պետությունների բնակչության սանիտարահամաճարակային բարեկեցությանը՝ կապված «COVID-19» համավարակի տարածման հետ, շեշտելով Եվրասիական զարգացման բանկի Թվային նախաձեռնությունների հիմնադրամի կողմից ներկայացված «Ճանապարհորդում եմ առանց COVID-19» փորձնական ծրագրի կարևորությունը:

Դեկտեմբերի 4-ին կայացած Եվրասիական միջկառավարական խորհրդի նիստին հաստատվել է Միության ներքին շուկայում այն բացառումների և սահմանափակումների ցանկը, որոնք պետք է վերացվեն 2021-2022 թվականներին:

13.6 Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն

Շարունակվել են ՀԱՊԿ-ի շրջանակներում իրականացվող փոխգործակցության հետագա խորացման ուղղությամբ քայլերը՝ ուշադրության կենտրոնում պահելով ՀԱՊԿ ԱԳՆԽ և ՀԱԽ մակարդակով ընդունված որոշումների իրագործումը:

Կորոնավիրուսի համավարակով պայմանավորված՝ մի շարք միջոցառումներ հետաձգվել են կամ կայացել առցանց: Հնարավոր չի եղել կազմակերպել միջազգային հարթակներում ՀԱՊԿ անդամ պետությունների ԱԳ նախարարների ձևաչափով հանդիպումները, ՀԱՊԿ ԱԽՔԿ միջնստաշրջանային նիստը, հետաձգվել են ՀԱՊԿ ռազմատնտեսական (տեխնիկական) համագործակցության հարցերով, ՀԱՊԿ շրջանակներում համագործակցության խորացմանը, մինչև 2025թ. ՀԱՊԿ Հավաքական անվտանգության ռազմավարության իրականացմանը վերաբերող մի շարք խորհրդատվություններ և նիստեր:

Հայաստանը, պայմանավորված ադրբեջանական ագրեսիայով, չի մասնակցել **հոկտեմբերի 12-ից 16-ը** Բելառուսում կայացած ՀԱՊԿ խաղաղապահ ուժերի «Անխախտ եղբայրություն 2020»զորավարժություններին:

Ավարտվել է ՀԱՊԿ խաղաղապահ գործունեության մասին 2007թ. հոկտեմբերի 6-ի համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին արձանագրության ներպետական համաձայնեցման գործընթացը: Արձանագրության կնքման արդյունքում կձևավորվի անհրաժեշտ իրավական բազա՝ ՄԱԿ խաղաղապահ առաքելություններում ՀԱՊԿ հավաքական խաղաղապահ ուժերի մասնակցության համար:

Դեկտեմբերի 2-ին ՀՀ վարչապետը մասնակցել է ՀԱՊԿ ՀԱԽ նստաշրջանին: Քննարկվել են միջազգային և տարածաշրջանային անվտանգությանը, ՀԱՊԿ պատասխանատվության գոտում իրադրությանն առնչվող հարցեր: ՀԱԽ կողմից ընդունվել է ՀԱՊԿ ՀԱԽ հռչակագիրը ու Արդար և կայուն աշխարհակարգի ձևավորման մասին ՀԱՊԿ ՀԱԽ հայտարարությունը: Հայաստանյան կողմին է փոխանցվել ՀԱՊԿ քարտուղարության ռազմական համագործակցության վարչության ղեկավարումը 2021-2023թթ.:

ՀԱՊԿ ԱԳՆԽ **մայիսի 26-ի** նիստի արդյունքում, ՀԱՊԿ անդամ պետությունների ԱԳ նախարարների կողմից ընդունվել են 4 համատեղ հայտարարություններ:

Դեկտեմբերի 6-ին ՌԴ աշխատանքային այցի շրջանակներում նախարար Արա Այվազյանը Մոսկվայում հանդիպել է ՀԱՊԿ ԳՔ հետ: Անդրադարձ է կատարվել տարածաշրջանային անվտանգության, այդ թվում՝ ադրբեջանական ագրեսիային, ՀԱՊԿ կանոնադրական մարմինների նիստերի և ՀԱԽ նստաշրջանի արդյունքներին և ՀԱՊԿ քարտուղարության գործունեությանը վերաբերող հարցերի:

Փետրվարի 27-ից 28-ը կայացել է ՀԱՊԿ ԳՔ Զասի աշխատանքային այցը ՀՀ: Հանդիպումներ են եղել ՀՀ վարչապետի, ԱԺ նախագահի տեղակալի, ԱԳ և պաշտպանության նախարարների, ԱԽ քարտուղարի հետ: Անդրադարձ է կատարվել ՀԱՊԿ շրջանակներում համագործակցության խորացման, ռազմական բաղադրիչի

զարգացման, արդի մարտահրավերներին և սպառնալիքներին հակազդման հարցերին, կարևորվել է համատեղ զորավարժությունների անցկացումը:

Հունիսի 15-ին և նոյեմբերի 30-ին առցանց կայացել են ՀԱՊԿ ԽՎ խորհրդի նիստերը: **Նոյեմբերի 30-ին** կայացել է նաև ՀԱՊԿ ԽՎ 13-րդ լիագումար նիստը:

13.7 Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպություն

Շարունակվել է Հայաստան-ՆԱՏՕ Անհատական գործընկերության գործողությունների ծրագրի (ԱԳԳԾ), ինչպես նաև Պլանավորման և վերանայման գործընթացով (ՊՎԳ) նախատեսված քաղաքական (այդ թվում՝ ժողովրդավարական և ինստիտուցիոնալ բարեփոխումների մասով), անվտանգության, պաշտպանական և ռազմական, հասարակության իրազեկման, գիտության, բնապահպանության, արտակարգ իրավիճակների և հարակից այլ ոլորտներում ՀՀ-ՆԱՏՕ համագործակցությունը:

Հոկտեմբերի 2-ին Հայաստանի Հանրապետության նախագահ Արմեն Սարգսյանը Բրյուսելում՝ ՆԱՏՕ-ի կենտրոնակայանում, հանդիպել է ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Յենս Ստոլտենբերգի հետ: Նախագահ Սարգսյանն անդրադարձել է Արցախի Հանրապետության դեմ ու Հայաստանի սահմաններին Ադրբեջանի սանձազերծած ռազմական ագրեսիայի հետևանքով ստեղծված իրադրությանը և հատկապես իր մտահոգությունը հայտնել ՆԱՏՕ-ի անդամ Թուրքիայի կողմից Ադրբեջանին ցուցաբերվող բացահայտ ռազմաքաղաքական աջակցության առնչությամբ:

Հեռավար մասնակցությամբ ապահովվել է հայկական կողմի մասնակցությունը ՆԱՏՕ Աղետներին Եվրատլանտյան արձագանքման կենտրոնի կողմից առցանց անցկացվող որոշ վեբինարների:

ՀՀ ԱԳՆ-ն օժանդակել է ՆԱՏՕ ԽՎ-ում ՀՀ ԱԺ պատվիրակության աշխատանքներին: Անհրաժեշտ փաթեթներ են տրամադրվել ՆԱՏՕ ԽՎ-ում ՀՀ ԱԺ պատվիրակությանը՝ հուլիսին, օգոստոսի վերջին-սեպտեմբերի սկզբին տեղի ունեցած կոմիտեների առցանց նիստերի համար:

13.8 Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպություն

Փետրվարի 25-ին կայացել է ՖՄԿ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի գրասենյակի կողմից կազմակերպված աշխատանքային հանդիպումը:

Մարտի 1-ին ԱԳՆ հրատարակել է Հայաստանում մարտ-ապրիլ ամիսներին ավանդաբար իրականացվող Ֆրանկոֆոնիայի երկամսյակի միջոցառումների ծրագիրը: **Մարտի 9-ին** ԱԳՆ դիվանագիտական դպրոցում անցկացվել է դասընթաց

շուրջ երկու տասնյակ հայ լրագրողների համար՝ նվիրված Ֆրանկոֆոնիայի ստեղծման պատմությանը, գործունեությանը, ՀՀ-ՖՄԿ համագործակցությանը:

ԱԳ նախարարությունն իրականացրել է ՖՄԿ գագաթնաժողովում ՀՀ նախագահության շրջանակներում 2020թ. մայիսին ՀՀ-ԵԽ-ՖՄԿ ձևաչափով նախատեսված Կանանց և աղջիկների դեմ բռնությունների կանխարգելմանը նվիրված համաժողովի նախապատրաստական աշխատանքներ:

Սեպտեմբերի 8-ին ԱԳ նախարարը մասնակցել և ելույթով հանդես է եկել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի՝ «ՄԱԿ-ի և տարածաշրջանային և ենթատարածաշրջանային կազմակերպություններ. Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության դերը» խորագրով բաց քննարկմանը:

Նոյեմբերի 24-ին ՀՀ ԱԳ նախարարի տեղակալը մասնակցել է Ֆրանկոֆոնիայի նախարարական համաժողովի 37-րդ առցանց նիստին՝ հանդես գալով ելույթով:

Ֆրանկոֆոնիայի նախարարական համաժողովին ՀՀ-ն, որպես Ֆրանկոֆոնիայի գագաթնաժողովում նախագահող երկիր ներկայացրել էր բանաձևը՝ «Ապրել միասին «Covid-19» համավարակի պայմաններում և հետկովիդյան աշխարհում» խորագրով, որն ընդունվել է կոնսենսուսով:

Հայաստանը տարվա ընթացքում շարունակել է ՖՄԿ անդամ երկրներից հավաքել տեղեկատվություն՝ «Երևանյան հռչակագրի» և գագաթնաժողովում ընդունված բանաձևերի կատարման ընթացքի վերաբերյալ, որի հաշվետվությունը ներկայացվել է Ֆրանկոֆոնիայի նախարարների կոմիտեի նոյեմբերի 25-ին կայացած նիստում:

Դեկտեմբերի 9-ին ԱԳ նախարարը հանդիպում է ունեցել Ֆրանկոֆոնիայի Գլխավոր քարտուղարի հետ: Նախարարը համապարփակ կերպով ներկայացրել է Արցախի դեմ Ադրբեջանի սանձազերծած ագրեսիայի ընթացքը, դրա հետևանքով ի հայտ եկած նոր մարտահրավերները:

14. Միջազգային տնտեսական համագործակցություն

2020թ. ՀՀ-ն մասնակցել է **Սևծովյան Տնտեսական Համագործակցության Կազմակերպության** շրջանակներում բարձրաստիճան և փորձագիտական միջոցառումներին, ներկայացվել են կազմակերպության հետ ՀՀ համագործակցության առաջնահերթությունները, համավարակի հետևանքով առաջ եկած խնդիրները, Արցախի դեմ սանձազերծված ռազմական ագրեսիայի և դրա հետևանքների վերաբերյալ ՀՀ փաստարկները և դիրքորոշումները:

Ապրիլին 30-ին մշակվել և ստորագրվել է ՀՀ կառավարության և **Պարենի համաշխարհային ծրագրի** միջև փոխըմբռնման հուշագիրը և հաստատվել է ՀՀ-ում ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի՝ ՊՀԾ 2019-2024թթ. համար ազգային

ռազմավարական ծրագիրը, որի շրջանակներում կշարունակվեն իրականացվել ծրագրեր՝ ուղղված Հայաստանում պարենային անապահովության, թերսնուցման և աղքատության հաղթահարմանը:

2020թ. ընթացքում մեկնարկել են **ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության (UNIDO)** և ՀՀ միջև համագործակցության ընդհանուր համաձայնագրի կնքման, ինչպես նաև ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության Հայաստանի համար **2021-2025թթ.** Ազգային ծրագրի մշակման և հաստատման հետ կապված գործընթացները:

Սեպտեմբերի 5-ին ՀՀ նախագահը մասնակցել է Արաբական Միացյալ Էմիրությունների և ՄԱԿ-ի արդյունաբերության զարգացման կազմակերպության համանախագահությամբ կազմակերպված՝ Արտադրության և ինդուստրացման գլոբալ գագաթնաժողովի շրջանակում **«Վերականգնելով բարեկեցությունը հետհամավարակային աշխարհում» բարձրաստիճան առցանց քննարկմանը:**

ՀՀ-ն մասնակցել է ՄԱԿ-ի Արդյունաբերական զարգացման կազմա–կերպության քարտուղարության կողմից մշակված հետհակամարտա–յին (հետճգնաժամային) իրավիճակներում UNIDO-ի հնարավոր ներգրավման մասին նոր ռազմավարության փաստաթղթի քննարկման և հաստատման գործընթացներին:

Սեպտեմբերի 23-ին ՀՀ ԱԳ նախարարը մասնակցել և ելույթով է հանդես եկել **ՄԱԿ-ի դեպի ծով ելք չունեցող զարգացող երկրների խմբի (LLDC)**՝ «Համագործակցություն ուղղված Վիեննայի գործողությունների ծրագրի և դեպի ծով ելք չունեցող զարգացող երկրների կայուն զարգացման նպատակների արագ իրականացմանը» թեմայով նախարարական առցանց հանդիպմանը:

Հայաստանը մշակել և LLDC-ի քարտուղարությանն է ներկայացրել Վիեննայի գործողությունների ծրագրի իրականացման գործում Դեպի ծով ելք չունեցող զարգացող երկրներին ՄԱԿ-ի համակարգի աջակցության վերաբերյալ ՄԱԿ-ի Համատեղ գնահատման խմբի ուսումնասիրության շրջանակներում ներկայացված հարցաշարը:

ԱԳՆ կողմից համակարգվել է **Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD)** և ՀՀ գերատեսչությունների միջև համագործակցությունը, ներկայացվել է ԵՄ ԱլԳ պետություններում ՓՄՁ վերաբերյալ 2020թ. զեկույցը և դրանում Հայաստանին վերաբերող հատվածը, Արևելյան գործընկերության պետություններում ներդրումների հեռանկար–ների և աջակցության վերաբերյալ երկու թեմատիկ զեկույցների՝ ՀՀ-ին առնչվող հատվածները:

15. Մարդու իրավունքների պաշտպանության հարցեր

2020թ. ՀՀ շարունակել է համագործակցությունը ՄԱԿ-ի հետ մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում: Աշխատանքների զգալի մասն առնչվել է սեպտեմբերի 27-ին Արցախի դեմ սանձազերծված ագրեսիայի ընթացքում մարդու իրավունքների խախտումների, պատերազմական հանցագործությունների վերաբերյալ ՄԱԿ կառույցներին տեղեկատվության տրամադրմանը:

Մարդու իրավունքների խորհրդի շրջանակներում Հայաստանը համահեղինակել և կողմ է քվեարկել մի շարք բանաձևերի: Հայաստանն ակտիվորեն առաջ է քաշել իր առաջնահերթությունները ՄԻԽ նստաշրջաններում՝ որպես Խորհրդի անդամ պետություն (2020-2022թթ.):

ԱԳ նախարարը մասնակցել է Մարդու իրավունքների խորհրդի 43-րդ նստաշրջանին: Նա անդրադարձել է Հայաստանում ժողովրդավարության, մարդու իրավունքների խթանման ուղղությամբ տարվող աշխատանքներին և բարեփոխումներին, միջազգային մակարդակով ՀՀ կողմից ցեղասպանության կանխարգելման օրակարգի առաջմղմանը, ԼՂ հակամարտության համատեքստում հակամարտության գոտիներում բնակվող անձանց իրավունքների պաշտպանությանը: ԱԳ նախարարը նաև հանդիպումներ է ունեցել ՄԱԿ ժնևյան գրասենյակի գլխավոր տնօրենի, ՄԱԿ-ի փախստականների հարցերով բարձրագույն հանձնակատարի հետ, ինչպես նաև ԵԽ գլխավոր քարտուղարի հետ:

Դեկտեմբերի 4-ին տեղի է ունեցել ԵԽ մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի կոնվենցիայի կողմ պետությունների կոմիտեի 27-րդ հանդիպումը: Նիստում Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի հարցերով փորձագետների խմբի (GRETA) անդամի ընտրություններում ՀՀ թեկնածուն 4 տարի ժամկետով ընտրվել է որպես խմբի անդամ:

2020թ. շարունակվել է երկխոսությունը և համագործակցությունը Կարմիր խաչի միջազգային կոմիտեի հետ: ԼՂ հակամարտության առնչությամբ անհայտ կորած անձանց հետմահու տվյալների հավաքագրման և կենտրոնացված կառավարման վերաբերյալ արձանագրության ստորագրման հարցը նույնպես եղել է կազմակերպության հետ շփումների կենտրոնում: ԱԳՆ-ն ԿԽՄԿ ներկայացուցիչների հետ հանդիպումներում մշտապես բարձրաձայնել է Ադրբեջանում գերության մեջ գտնվող ՀՀ քաղաքացիների խոշտանգումների, ֆիզիկական և հոգեկան բռնաճնշումների ենթարկվելու, նրանց դեմ հարուցված կեղծ դատական գործերի մասին:

Տարվա ընթացքում հանդիպում է տեղի ունեցել նաև **Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիայի** Եվրոպայի տարածաշրջանային տնօրենի և Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիայի Հարավային Կովկասի պատվիրակության ղեկավարի հետ: Քննարկվել են Արցախի դեմ Ադրբեջանի կողմից սանձազերծված ռազմական

ագրեսիայի հետևանքով տեղահանված անձանց հումանիտար աջակցության տրամադրման հարցերը:

Ակտիվ է եղել համագործակցությունը **ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի** հետ: **Փետրվարի 25-ին** ՀՀ ԱԳ նախարարը հանդիպել է ՄԱԿ Փախստականների հարցերով բարձրագույն հանձնակատարին՝ ներկայացնելով սիրիահայերի կարիքներին արձագանքելու և Հայաստանում կեցության բարելավման ուղղությամբ ձեռնարկվող քայլերը, վերահաստատելով ՀՀ լիակատար աջակցությունը և հանձնառությունը Փախստականների համաշխարհային պայմանագրին:

Նախապատրաստվել է «Յուրաքանչյուր գործողություն կարևոր է. փախստականների իրավունքների արդյունավետ և հարատև պաշտպանությունը Հայաստանում» խորագրով առցանց համաժողովը՝ նվիրված փախստականների համաշխարհային օրվան:

Հոկտեմբերի 5-ին տեղի է ունեցել ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի Գործադիր կոմիտեի 71-րդ նստաշրջանը, որի ընթացքում ելույթով հանդես է եկել ՀՀ ԱԳ նախարարի տեղակալը:

Մարտի 10-ին ԱԳՆ-ում տեղի է ունեցել ՄԱԿ ԱԽ «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» 1325 բանաձևի դրույթների իրականացման գործողությունների ազգային ծրագրի կիրառմանը նվիրված հանդիպում:

Դեկտեմբերի 7-ին Հանոյում կայացած «Խաղաղության ձևավորման և պահպանման գործում կանանց դերակատարման ամրապնդում՝ հանձնառություններից մինչև արդյունքներ» խորագրով միջազգային համաժողովին տեսաուղերձով է հանդես եկել ՀՀ ԱԳ նախարարը:

16. Գլոբալ անվտանգության և ոչ կոնվենցիոնալ խնդիրներ

Հաշվետու տարում Հայաստանը մասնակցել է **ահաբեկչության դեմ** պայքարի թեմայով ՄԱԿ և ԵԱՀԿ միջոցառումներին:

Հուլիսի 6-ից 10-ը կազմակերպվել է ահաբեկչության դեմ պայքարի թեմայով ՄԱԿ-ի շաբաթ առցանց համաժողովը, որն անցկացվել է «Գլոբալ համաճարակային միջավայրում ահաբեկչության դեմ պայքարի ռազմավարական և գործնական մարտահրավերները» խորագրի ներքո:

Շարունակվել են աշխատանքները ՀՀ միջուկային էներգետիկայի ոլորտի զարգացման նպատակով **ԱԷՄԳ** ընձեռած հնարավորությունների օգտագործման ուղղությամբ:

Տարվա ընթացքում ՀՀ ԱԳՆ-ն իրականացրել է Քիմիական զենքի արգելման կոնվենցիայից բխող պարտավորությունների իրականացման համակարգողի գործառույթները:

Հուլիսի 28-ին ԱԳՆ ներկայացուցիչը մասնակցել է ՔՀԱԿ քարտուղարության կազմակերպած անդամ-պետությունների ազգային մարմինների Արևելաեվրոպական տարածաշրջանի, իսկ **նոյեմբերի 23-ից 25-ը՝** տարեկան առցանց հանդիպումներին: ՔՀԱԿ-ում ՀՀ ՄՆ-ը տարածել է Արցախում ադրբեջանական ՋՈՒ կողմից սպիտակ ֆոսֆորի կիրառման հարցի վրա ուշադրություն հրավիրող հայտագիր:

17. Խաղաղապահ գործունեություն

ՀՀ ՋՈՒ խաղաղապահ ուժերը շարունակել են հերթափոխով նախատեսված իրենց ծառայությունն՝ ի կատարում ՄԱԿ-ի ԱԽ համապատասխան բանաձևերի:

Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմի ժամանակ որոշում է ընդունվել մասամբ կրճատել ՆԱՏՕ-ի հովանու ներքո Աֆղանստանում «Հաստատակամ աջակցություն» առաքելության շրջանակներում ներգրավված հայ խաղաղապահների թվաքանակը: Կոսովոյում հայ առաքելության անձնակազմի թիվը մնացել է անփոփոխ: ՄԱԿ-ի մանդատով Լիբանանում և Մալիում (առաքելություններում ներգրավված անձնակազմերը) շարունակել են ծառայությունը՝ ըստ ձեռք բերված պայմանավորվածությունների:

Սիրիայի Հալեպ նահանգում ՀՀ հումանիտար առաքելությունը շարունակել է հաջողությամբ իրականացնել իր առջև դրված նպատակները՝ նպաստելով տեղի բնակչության վերադարձին իր բնակավայրեր:

18. Իրավապայմանագրային դաշտ

2020թ. ընթացքում նախարարության կողմից պատրաստվել և ստորագրման է ներկայացվել **36** միջազգային պայմանագիր, իրականացվել է **56** միջազգային պայմանագրի վավերացման կամ հաստատման գործընթաց:

Մշակվել և շրջանառվել են միջազգային երկկողմ ու բազմակողմ պայմանագրերի շուրջ **400** նախագծեր: Փորձաքննության է ենթարկվել միջազգային պայմանագրեր չհանդիսացող ավելի քան **100** երկկողմ ու բազմակողմ փաստաթուղթ:

Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմի պայմաններում ԱԳՆ հանդես է եկել միջազգային իրավունքի բնագավառում (ժողովուրդների ինքնորոշման իրավունքի, «անջատում հանուն փրկության» սկզբունքի, պատերազմական

հանցագործությունների, միջազգային իրավունքի և մարդասիրական իրավունքի այլ հարցերով) մի շարք նախաձեռնություններով և առաջարկներով, մասնագիտական աջակցությամբ և խորհրդատվությամբ:

ՄԱԿ-ի շրջանակներում անհրաժեշտ աշխատանքներ են տարվել «Վարձկանների հավաքագրման, օգտագործման, ֆինանսավորման և ուսուցման դեմ» կոնվենցիային ՀՀ միանալու ուղղությամբ:

19. Հյուպատոսական ծառայություն

Տարվա ընթացքում ստացվել և ընթացք է տրվել հարյուրավոր գրությունների, տարաբնույթ նամակների և դիմումների՝ ուղղված ՀՀ ԱԳՆ info@mfa.am, visa@mfa.am և hotline@mfa.am էլ-փոստի հասցեներին, ինչպես նաև E-request.am հարթակին:

Հաշվետու տարում շարունակվել են աշխատանքներն օտարերկրյա պետություններում ՀՀ քաղաքացիների խախտված իրավունքները վերականգնելու և օրինական շահերը պաշտպանելու ուղղությամբ:

Սեպտեմբեր ամսից ԱԳՆ հյուպատոսական վարչության կողմից տրամադրվող ՀՀ վերադարձի վկայականները պարունակել են նաև ավտոմատ գեներացվող իսկության ստուգման համար նախատեսված հատուկ համարանիշ և արագ արձագանքման ծածկագիր (QR-կոդ), որը հնարավորություն է տալիս ստուգել փաստաթղթերը www.e-verify.am համակարգի միջոցով:

Կենսաչափական տվյալներ պարունակող ՀՀ անձնագրերի տրամադրման համակարգի միջոցով անձնագրավորվել է **6039** ՀՀ քաղաքացի:

20. Հանդիպումներ և փոխադարձ այցելություններ

Ընդհանուր առմամբ հաշվետու ժամանակահատվածում կայացել է ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանի **9** աշխատանքային, ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի **5** (**1** պաշտոնական և **4** աշխատանքային, «COVID-19» համավարակի պատճառով մի շարք այցեր չեղարկվել են, իսկ միջոցառումները տեղի են ունեցել թվով **8** տեսակոնֆերանսի ձևաչափով) և ԱԳ նախարարներ Զոհրաբ Մնացականյանի և Արա Այվազյանի՝ **12** (**2** պաշտոնական և **10** աշխատանքային, համավարակի պատճառով չեղարկված այցերի միջոցառումներն անց են կացվել **13** տեսակոնֆերանսի ձևաչափով) այց:

Հայաստան է այցելել **1** պետության ղեկավար (պաշտոնական այց), **3** երկրի կառավարությունների ղեկավարներ (աշխատանքային այցեր), **4** երկրի արտաքին գործերի նախարարներ (**2** պաշտոնական և **2** աշխատանքային այց), **3** միջազգային կազմակերպությունների ղեկավարներ (աշխատանքային այցեր):

Տեղի է ունեցել օտարերկրյա **11** բարձրաստիճան պատվիրակությունների պաշտոնական և աշխատանքային այցելություններ Հայաստանի Հանրապետություն:

21. Դիվանագիտական հարաբերություններ

2020թ. դեկտեմբերի դրությամբ ՀՀ-ն դիվանագիտական հարաբերություններ հաստատել է **178** պետության հետ: ՀՀ-ում հավատարմագրված է **37** ռեզիդենտ և **78** ոչ ռեզիդենտ դեսպան, **25** միջազգային կազմակերպության ներկայացուցիչ, **2** գլխավոր հյուպատոս և **43** պատվավոր հյուպատոս:
2020թ. ագրեման է տրվել **15** օտարերկրյա դեսպանների, հավատարմագրեր են հանձնել **9** դեսպաններ և **1** միջազգային կազմակերպության ներկայացուցիչ, հավատարմագրվել են օտարերկրյա **4** պատվավոր հյուպատոս, ինչպես նաև համաձայնություն է տրվել ՀՀ-ում օտարերկրյա **16** ռազմական կցորդի:

Հաշվետու ժամանակահատվածի ավարտին արտերկրում ՀՀ-ն ունի հավատարմագրված **49** ռեզիդենտ դեսպան, ովքեր համատեղության կարգով հավատարմագրված են ընդհանուր առմամբ **80** երկրում:

ՀՀ մշտական ներկայացուցիչներ են նշանակված **20** միջազգային կազմակերպություններում, արտերկրում գործում են ՀՀ **10** գլխավոր հյուպատոսություն, **1** հյուպատոսական գրասենյակ և **50** պատվավոր հյուպատոսություն:

22. Դիվանագիտական դպրոց

Հաստատման ժամկետներով պայմանավորված՝ «Միջազգային հարաբերություններ և դիվանագիտություն» դասընթացը մեկնարկել է 2020թ. **փետրվարի 27-ին**: Համավարակի պատճառով Դիվանագիտական դպրոցի տարբեր ծրագրերի անցկացումը ենթարկվել է փոփոխությունների. Դիվանագիտական կադրերի պատրաստման ծրագրի դասերը **մարտի 16-ից**՝ Հայաստանում արտակարգ իրավիճակի հաստատման օրվանից դադարեցվել են և առցանց տարբերակով վերսկսել **հոկտեմբերի 5-ից**: Դիվանագետների և այլ պետական գերատեսչությունների արտաքին հարաբերությունների համար պատասխանատու ստորաբաժանումների աշխատակիցների վերապատրաստման երկու դասընթացներից մեկը չեղյալ է հայտարարվել, իսկ «Հյուպատոսական գործունեություն» թեմայով դիվանագետների վերապատրաստման ծրագիրը ՀՀ ԱԳՆ համաձայնությամբ տեղափոխվել է 2021թ.:

Մարտի 2-ից 13-ը ՀՀ ԱԳՆ լրատվության և հանրային դիվանագիտության վարչության նախաձեռնությամբ և Դիվանագիտական դպրոցի օժանդակությամբ Դիվանագիտական դպրոցում անցկացվել է արտաքին հարաբերությունների ոլորտը լուսաբանող լրագրողների վերապատրաստման դասընթացը:

Դիվանագիտական դպրոցը հրատարակել է դիվանագետ Արման Խաչատրյանի «Բանակցությունները բազմակողմ հարթակներում» գիրքը:

23. Միջազգային հանրային կարծիք

2020թ. շարունակվել են ՀՀ արտաքին քաղաքականության դիրքորոշումների վերաբերյալ միջազգային իրազեկվածության բարձրացմանը, մեր երկրի միջազգային դրական հեղինակության ամրապնդմանն ուղղված քայլերը: Կորոնավիրուսային համավարակի տարածմամբ և Արցախի նկատմամբ Ադրբեջանի կողմից սանձազերծված ռազմական գործողություններով պայմանավորված՝ տեղեկատվական ոլորտում իրականացվել են անհրաժեշտ օպերատիվ միջոցառումներ:

Հանրապետության նախագահը, վարչապետն ու արտաքին գործերի նախարարները մի քանի տասնյակ հարցազրույցներ են տվել միջազգային հեղինակավոր լրատվամիջոցներին, հանդես են եկել մամուլի ասուլիսներով՝ ներկայացնելով տարածաշրջանային և միջազգային տարբեր գործընթացների խնդիրների ու դրանց հանգուցալուծման վերաբերյալ Հայաստանի դիրքորոշումը:

ՀՀ ԱԳ նախարարներ Մնացականյանն ու Այվազյանն ունեցել են **20** ելույթ և ճեպազրույց, հարցազրույց են տվել 11 հայաստանյան և **31** միջազգային լրատվամիջոցների, որոնց թվում՝ «Ալ Ջազիրա», «France 24», «BBC Newshour», «ՌԲԿ», «Դոյչե Վելլե» լրատվականներին, «CNN»-ի «Amanpour» հեռուստածրագրին, «Le monde» օրաթերթին:

Տարվա ընթացքում մեծ է եղել օտարերկրյա լրատվամիջոցների կողմից Հայաստանի նկատմամբ հետաքրքրությունը: Հայաստանի վերաբերյալ հաղորդաշարեր և հոդվածներ պատրաստելու նպատակով երկիր են այցելել բազմաթիվ միջազգային լրատվամիջոցների ներկայացուցիչներ և ֆիլմարտադրողների խմբեր:

2020թ. ԱԳՆ-ում երկարաժամկետ հավատարմագրում են ստացել տեղական լրատվամիջոց ներկայացնող լրագրողներ, օտարերկրյա լրատվամիջոցների հայաստանյան ներկայացուցչությունների թղթակիցներ, Հայաստանում մշտական ներկայացուցչություն չունեցող միջազգային լրատվամիջոցների լրագրողներ՝ ընդհանուր առմամբ **250** հոգի:

Սեպտեմբերի 27-ից նոյեմբերի 9-ը Արցախի դեմ սանձազերծած ադրբեջանական ռազմական ագրեսիան լուսաբանելու համար Հայաստան են ժամանել օտարերկրյա բազմաթիվ առաջատար լրատվամիջոցների ներկայացուցիչներ, անհատ լրագրողներ և բլոգերներ: Ռազմական գործողությունների մեկնարկից անմիջապես հետո իրականացվել է այդ գործողությունները լուսաբանել ցանկացող միջազգային լրատվամիջոցների ներկայացուցիչների շուրջօրյա ռեժիմով հավատարմագրումը: ԱԳՆ կողմից կարճաժամկետ հավատարմագրված ավելի քան **950** օտարերկրյա լրագրողներից շուրջ **800**-ը ժամանել է 44-օրյապատերազմը լուսաբանելու նպատակով:

Արցախում ծավալված իրադարձությունների հենց առաջին օրվանից ԱԳՆ-ն, անցնելով աշխատանքային շուրջօրյա ռեժիմի, նախաձեռնել և իրականացրել է պատերազմական գործողությունների լուսաբանման և միջազգային հանրությանն անաչառ տեղեկատվության տրամադրմանն ուղղված բազմաբնույթ աշխատանքներ՝ ապահովելով վերոնշյալ **800** լրագրողների անխափան գործունեությունը ՀՀ տարածքում և Արցախում:

ՀՀ ԱԳՆ կայքէջում ստեղծվել է հատուկ բաժին՝ նվիրված Արցախի դեմ Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմին, որում օրական կտրվածքով տեղադրվել է օրվա առավել կարևոր իրադարձությունները:

Արտերկրում ՀՀ դիվանագիտական ծառայության մարմինների գործունեությունը լուսաբանելու համար՝ որպես առանձին հարթակ Facebook և Twitter սոցիալական ցանցերում գործարկվել է «**Armenian Diplomacy»** սոցիալական մեդիա հարթակը, որտեղ հրապարակվում են Հայաստանի դիվանագիտական ծառայության մարմինների հանրային գործունեությանը, ՀՀ մշակութային քաղաքականությանը, արտաքին հարաբերություններում ներգրավվածությանը վերաբերող նյութեր, իսկ ԱԳՆ կայքէջում գործարկվել է **«Դիվանագիտական օրագիր»** բաժինը:

«COVID-19» համավարակի տարածման պայմաններում ԱԳՆ տեղեկատվական հարթակներով կազմակերպվել են ՀՀ քաղաքացիների և Հայաստան ժամանել ցանկացող օտարերկրյա քաղաքացիների իրազեկման աշխատանքները: